Ահ 187-249 (ա 237) = 62

Azg
armenian daily

1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1997 ՇԱԲԱԹ # 187 (1441)

Հայաստանի ... 2013

Թուրքիան չընդունեց Իսրայելի նոր դեսպանին

ՍՏԱՄԲՈՒԼ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՍ ՏՊՊՍ. Անկարան պաշտոնապես հրաժարվել է ընդունել Իսրայելի Թուրքիայում նշանակված նոր դեսպան Եհուդ Թոլեդանոյին: Ինչպես հաղորդում է Ստամբուլի «Մարմարա» օրաթերթը, իր մերժումը Անկարան պատճառաբանում է նրանով, որ Թոլեդանոն 1984 թ.-ին հրապարակել է մի հոդված, որում Թուրքիային ամբաստանել է «հայոց ցեղասպանություն» իրագործելու հանցանքի մեջ: Թուրքիայի արտգործնախարարության խոսնակը հույս է հայտնել, որ այդ մերժումը չի ազդի Թուրքիայի եւ Իսրայելի փոխհարաբերությունների վրա: Ընդսմին նա նշել է, որ Թուրքիա-Իսրայել-ԱՄՆ զորավարժությունների հետաձգումը կապ չունի այդ որոշման հետ:

Արսանովը վերջնագիր ներկայացրեց Մոսկվային

30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ». Չեչենական պատերազմներն այսօր հայտարարեցին, թե իրենք Չեչնիայից կարտաքսեն Ռուսաստանի ներկայացուցիչներին, եթե Ռուսաստանը թույլ չտա, որ չեչենական պատվիրակությունը թռչի Բաքու: Չեչնիայի փոխնախագահ Վահա Արսանովի խոսքերով, պատվիրակությունը պետք է Բաքու մեկներ կիրակի օրը, սակայն օդային անցման իրավունք նրանք չեն ստացել, փաստ, որը, Արսանովի խոսքերով, հեռահար նպատակներ է հետապնդում: Արսանովը պահանջեց, որ Մոսկվան ներողություն խնդրի դրա համար եւ երաշխավորի, որ նման միջադեպեր չեն կրկնվի: Մոսկվան պաշտոնական պատասխան չի տվել:

ՄԱԿ

Կարեւորվում են անվտանգության երաշխիքները

Արզումանյանի ելույթը ՄԱԿ-ում եւ հանդիպումը Թալբոթի հետ

Երեկ ելույթ ունենալով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 52-րդ նստաշրջանի ընդհանուր քննարկումների շրջանակներում, ինչպես տեղեկացնում է Արմենպրեսը, վկայակոչելով ՀՀ ԱԳՆ մամուլի ծառայության տեղեկատվությունը, արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը գլխավորապես անդրադարձել է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին, հիշեցնելով, որ ազգերի ինքնորոշումը հանդիսանում է մարդու իրավունքների կարեւորագույն բաղկացուցիչ մաս: Նա ափսոսանք է հայտնել, որ ավելի քան երեք տարի տեւող հրադադարի պայմաններում ընթացող լարված բանակցություններում առ այսօր առաջընթաց չի արձանագրվել: Նախարարը նշել է, որ 1996 թ. ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթաժողովը, որը, ինչպես ենթադրվում էր, պետք է նպաստեր հրադադարի ամրապնդմանը եւ հող նախապատրաստեր այս տարվա ընթացքում հակամարտության կարգավորման գործընթացում բեկում արձանագրելու համար, չկարողացավ իրագործել այդ նպատակը: Փոխարենը, այն կոչտացրեց Ադրբեջանի դիրքորոշումը, դրանով իսկ նվազեցնելով կողմերի համար ընդունելի փոխզիջումային լուծման հնարավորությունը:

Արտգործնախարարը պնդել է, որ Ղարաբաղի բանակցությունների գործընթացում դրական տեղաշարժ արձանագրելու համար առաջին հերթին անհրաժեշտ են այնպիսի վստահելի երաշխիքներ Ղարաբաղի բնակչության եւ անվտանգության համար, որոնք կապահովեն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ֆիզիկական գոյությունն ու սեփական ճակատագրի եւ տարածքի տնօրինումը:

Նախարար Արզումանյանն ընդգծել է, որ հնարավոր չէ հակամարտության վերջնական կարգավորում՝ առանց Լեռնային Ղարաբաղի ներգրավման եւ մասնակցության սեփական քաղաքական կարգավիճակի բանակցություններում: Այդ կապակցությամբ արտգործնախարարը կոչ է արել Ադրբեջանին հնարավորին չափ շատ Լեռնային Ղարաբաղի ընտրյալ իշխանությունների հետ նստել ուղղակի բանակցությունների սեղանի շուրջ:

Ալ. Արզումանյանը ներկայացրել է նաեւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդլայնման կապակցությամբ Հայաստանի տեսակետը, եւ պատասխանել է խորհուրդը 5 մշտական անդամով համալրելու տեսակետը:

Նախորդ օրը, սեպտեմբերի 29-ին, ՀՀ արտգործնախարարը ՄԱԿ-ում Հայաստանի ներկայացուցչության շենքում հանդիպում է ունեցել Մ. Նահանգների պետքարտուղարության պատվիրակության հետ՝ պետքարտուղարի տեղակալ Սթրոբ Թալբոթի գլխավորությամբ: Վերջինիս ուղեկցել են ԱՄՆ նախագահի եւ պետքարտուղարի նորանկախ պետությունների հարցերով խորհրդատու Սթիվ Սեսանովիչը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Լին Պասկոն ու պետքարտուղարության Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի գրասենյակի տնօրեն Սթիվ Յանգը: Կողմերը քննարկել են համանախագահների վերջերս տարածաշրջան կատարած այցի համատեքստում դարաբաղյան հակամարտության կարգավորման փուլային կամ փաթեթային ծրագրերի առավելություններն ու թերությունները: Այս կապակցությամբ Սթրոբ Թալբոթը հավաստել է իր կառավարության մոտեցումը, ըստ որի լուծման յուրաքանչյուր տարբերակում Լեռնային Ղարաբաղին անհրաժեշտ է ապահովել անվտանգության ամենաբարձր մակարդակի երաշխիքներ: Կողմերը համաձայնել են բանակցային գործընթացում անհապաղ բեկում արձանագրելու անհրաժեշտության շուրջ:

Ավելի ուշ, Ա. Արզումանյանը «Ուոլ Սթրիթ Ջոռնալ» օրաթերթի խմբագրատանը հանդիպում է ունեցել խմբագրական խորհրդի անդամների հետ:

ԴԱՐԱԲԱԳԻ ՀԱՐՑ

Վիեննայի դիվանագետները մինչեւ դեկտեմբեր առաջընթաց են ակնկալում

«Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության տնօրեն Մարտն Սողոմյանը սեպտեմբերի 30-ին հետաքրքիր մանրամասներ հայտնեց դարաբաղյան հակամարտության լուծման հանգրվանային (փուլ առ փուլ) տարբերակի մասին, որի մասին պատմել էր նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ուրբաթ օրն անցկացրած իր մամլո ասուլիսում:

Վիեննայում տեղակայված դիվանագետներ «Ազատություն» ռադիոկայանի թղթակից Ռոնալդ Էգլսբերգին հայտնել են, թե ներկայումս ջանք է գործադրվում Հայաստանին եւ Ադրբեջանին համոզելու, որ նրանք ընդունեն Ղարաբաղի հակամարտության կարգավորման հանգրվանային տարբերակը:

Դիվանագետները տեսել են, որ հարցի հանգուցալուծման փաթեթային տարբերակը այժմ մեռյալ է համարվում: Նրանցից մեկը ասել է, որ հանգրվանային լուծումը միակ ելքն է, թեեւ դա նույնպես սահուն չի ընթանալու: Նա ավելացրել է, որ ԵԱՀԿ-ի ներկայացուցիչները վերջերս տարածաշրջան կատարած այցի ընթացքում որոշակի առաջարկություններ են արել, բայց դժգոհություն կալ այդ առաջարկներից: Ասվում է, որ ըստ հանգրվանային լուծման նոր ծրագրի, հայկական կողմը նախ վերադարձնելու է Ադրբեջանից գրավված վեց շրջանները, որին հաջորդող փուլում հայկական ուժերը դուրս են բերվելու Լաչինից ու Շուշիից, ուր տեղակայվելու են միջազգային խաղաղապահ ուժեր: Ըստ այս ծրագրի, ուժերի դուրսբերմանը կհաջորդեն փախստականների վերադարձը եւ փոխադարձ վստահություն ներշնչող այլ քայլեր: Ինչ վերաբերում է հարցի քաղաքական լուծմանը, դա արդեն վերջին հանգրվանն է լինելու, որի շուրջ բանակցությունները կարող են տարիներ շարունակվել:

Տես էջ 8

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունը երկու չափանիշ ունի

30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, VOA. Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը Քվեբեկին համերաշխության հավաստիացումներ տվեց, եթե նույնիսկ այդ նահագը որոշի անջատվել Կանադայից: Ինչպես նշեց նախագահի ներկայացուցիչը, Ժակ Շիրակն այդ մեկնաբանություններով հանդես եկավ երկուշաբթի օրը Փարիզում Քվեբեկի վարչապետ Լյուսիեն Բուշարի հետ հանդիպման ժամանակ: Բուշարի խոսքերով, բանակցությունների ավարտից հետո ինքը մտադիր է շարունակել պայքարը կանադական ֆրանսախոս այդ գավառի անկախության համար: Քվեբեկի անջատականները ձայների շատ չնչին տարբերությամբ 95 թ. պարտվեցին ինքնիշխանության մասին հանրաքվեում:

Երեւան. նշվեց ՉԺՀ կազմավորման 48-րդ տարեդարձը

Երեկ Հայաստանում Չինաստանի դեսպանությունում նշվեց ՉԺՀ կազմավորման 48-րդ տարեդարձը: ՀՀ-ում Չինաստանի ժողովրդական Հանրապետության դեսպան Յան Կեժունը եւ դեսպանության աշխատակազմը հյուրընկալեցին ՀՀ օրենսդիր եւ գործադիր իշխանության ղեկավարների, դիվանագետների, գործարարների, քաղաքական գործիչների ու լրագրողների: Չինաստանի եւ Հայաստանի հիմների կայացումից հետո հյուրերը շրջապատեցին տոնական սեղանը:

Ըստ Փաշազադեի՝ Հռոմի պապը Ղարաբաղը ճանաչում է միայն Ադրբեջանի կազմում

ԲԱՔՈՒ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՍ ՏՊՊՍ. Ադրբեջանի նախագահի Իտալիա կատարած պաշտոնական այցի շրջանակներում տեղի է ունեցել Կովկասի մահմեդականների հոգեւոր վարչության ղեկավար շեյխ ուլ-իսլամ Հաջի Ալլահշուքյուր Փաշազադեի հանդիպումը Հռոմի պապ Հովհաննես Պողոս Բ-ի հետ: Ա. Փաշազադեն ANS-press գործակալության թղթակցին հայտնել է, որ հանդիպման ընթացքում քննարկվել է նաեւ ղարաբաղյան հակամարտությունը: Նրա ասելով, Հովհաննես Պողոս Բ պապը հայտարարել է, որ Ղարաբաղը ճանաչում է միայն Ադրբեջանի կազմում:

Ա. Փաշազադեն ընդգծել է. «Մենք Հռոմի պապին հայտնեցինք, որ իրազեկ ենք Հայաստան եւ Ղարաբաղ այցելելու նրա մտադրության մասին, սակայն պնդեցինք, որ առանց Բաքվի մասնակցության Ղարաբաղ այցելելն անհարգալից վերաբերմունք կլիներ Ադրբեջանի նկատմամբ: Հովհաննես Պողոս Բ-ն այդ առումով համաձայնվեց մեզ հետ»: Կովկասի մահմեդականների առաջնորդը նշել է նաեւ, որ անձամբ Ադրբեջանի նախագահը եւ ինքը Հռոմի պապին հրավիրել են Ադրբեջան ու ավելացրել, որ պապը գոհունակությամբ է ընդունել այդ հրավերը:

Ամերիկյան օրենքները Ֆրանսիայում ուժի մեջ չեն

30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, VOA, RFI. Միացյալ Նահանգները սպառնում են պատժամիջոցներ կիրառել ֆրանսիական «Տոտալ» նավթային ընկերության դեմ, որը 2 մլրդ դոլար արժողությամբ համաձայնագիր է ստորագրել Իրանում խոշոր գազահանքի շահագործման մասին: Իսկ Փարիզում, դիվանագիտական շրջանակների կարծիքով, Վաշինգտոնի կողմից պատժամիջոցների կիրառումը ֆրանսիական նավթային «Տոտալ» ընկերության եւ նրա գործընկերներ՝ ռուսաստանյան «Գազպրոմ»-ի եւ մալայզիական «Պետրոնաս» ընկերության դեմ ի վերջո կարող է շրջվել հենց ամերիկյան շահերի դեմ: Ինչպես հայտնի է, «Տոտալը», «Գազպրոմը» եւ «Պետրոնասը» կիրակի օրն Իրանի հետ համաձայնագիր ստորագրեցին Պարսից ծոցում գազի խոշոր հանքավայրերի շահագործման մասին: Մինչդեռ ԱՄՆ-ը 96 թ. օգոստոսին հաստատել է «դ'Ամատոյի օրենքը», որն Իրանի եւ Լիբիայի հետ 40 մլն դոլարը գերազանցող գումարի համաձայնագրեր ստորագրելու դեպքում արտասահմանյան պետություններին եւ ընկերություններին դեմ պատժամիջոցներ է նախատեսում, քանի որ Միացյալ Նահանգներն Իրանին եւ Լիբիային կասկածում է միջազգային ահաբեկչությունը ֆինանսավորելու մեջ: Մինչդեռ, ինչպես Փարիզում հայտարարեց այսօր իր անունը չբացահայտած ֆրանսիական մի դիվանագետ, «Գազպրոմը» Ռուսաստանում ամերիկյան նավթային ընկերությունների հիմնական գործընկերներից մեկն է, իսկ «Պետրոնասը» նույն դերն է կատարում ԱՍԵԱՆ-ի երկրների գոտում: Ֆրանսիայի վարչապետ Լիոնել Ժոսպենը անհիմն անվանեց Ֆրանսիայի դեմ ուղղված ԱՄՆ-ի հնարավոր պատժամիջոցները, ընդգծելով, որ ամերիկյան օրենքներն ուժի մեջ են ԱՄՆ-ի, բայց ոչ Ֆրանսիայի տարածքում:

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ

Ոսկու հանքավայրերը շահագործելու նախնական պայմանագիր

ԱՐԻՍ ՂԱՋԱՐՅԱՆ

Ներկայումս մեր տարածաշրջանում արձանագրվող իրադարձությունները բնութագրվում են այնպիսի քաղաքական նշանակությամբ եւ բովանդակությամբ, որ հաստատես քաղաքականության լույսի ներքո է դիտվում յուրաքանչյուր առաջին հայացքից զուտ տնտեսական նախաձեռնությունը: Նավթային գործունը, որպես մեծ քաղաքականության ծեծված խաղաքարտ, ինչպես նաեւ խիստ տեղայնացված մի խնդիր, այսօր աստիճանաբար իր տեղը փոխում է գիջել այլ ադեն ավելի վիճահարույց մի հարցի, որն ուղղակիորեն կապված է տարածաշրջանային կայունության, առավելապես հայ-ադրբեջանական հակամարտության խնդրին: Այդպիսի մի գործոն են դարձել ոսկու հանքավայրերը, որոնց քաղաքական կշիռը օրըստօրե աճման միտում ունի: Ինչպես հայտնի է, օգոստոսի 20-ին ԱՄՆ RV Investment group services LLS կոնսորցիումի եւ «Ազերգազ» պետընկերության միջեւ ստորագրվել է մի պայմանագիր Գեսաբեկի, Սոյոլուի, Ղալ Բուլաղի, Վեղժնելի, Գոշի եւ Օղուբաղի ոսկու հանքերի հետախուզման, արդյունահանման եւ արտադրանքի վերաբերյալ: Հայտնի է նաեւ, որ պաշտոնական Բաքուն վերջին տարվա ընթացքում մի քանի անգամ հանդես է եկել բողոքի նոտայով «բռնազավթած» տարածքներում հայերի հետ ամերիկյան ընկերությունների կողմից ոսկու հանքերը մշակելու կապակցությամբ: Ավելին, ըստ «Երեւան» տեղեկատվական կենտրոնի հաղորդագրության, RV Investment group services LLS կոնսորցիումի ղեկավար Ռագուոմով ադրբեջանցի Ռզա Վագիրին ասել է, որ նման մեղադրանքների հաստատման դեպքում նա կդիմի ՄԱԿ-ի միջազգային դատարան: Նշենք, որ Ադրբեջանի Հանրապետությունը ներկայումս չի թաքցնում իր հավակնությունները ոսկու 9 հանքավայրերին տեր լինելու վերաբերյալ, «որոնցից երեքը տեղայնացված են «բռնազավթված» տարածքներում».

Տես էջ 2

254-98

8387 ահ

ԱԶԳ

տեղական

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԱԺ-ն որպես «օրերային շտաբ»

Շահութահա՞րկն է, որ մեզ պետք է ազատի «ֆինանսական փոսից»

ԱԺ-ի սեպտեմբերի 30-ի արտահերթ նիստում քննարկվեց Շահութահարկի մասին ՀՀ օրենքի նախագիծը, որի հեղինակը կառավարությունն է: Օրենքով կարգավորվում են հանրապետությունում շահութահարկի որոշման եւ վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանելով շահութահարկ վճարողների շրջանակը, շահութահարկի դրույքաչափերը, հաշվարկման եւ վճարման կարգը: Շահութահարկ են վճարում ՀՀ-ի ռեզիդենտները (տեսական գրանցում ստացած իրավաբանական անձինք) եւ ոչ ռեզիդենտները (իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները): Հարկվող շահույթը որոշվում է որպես հարկատուի համախառն եկամտի եւ սույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը: Համախառն եկամուտը հարկատուի հաշվետու տարում բոլոր եկամուտների հանրագումարն է, անկախ դրանց ստացման աղբյուրներից: Օրենքի նախագիծը ներառում է համախառն եկամտի նվազեցումները, շահութահարկի դրույքաչափերը, արտոնությունները, հարկային հաշվառումը, ոչ ռեզիդենտի հարկումը, սույն օրենքը խախտելու պատասխանատվությունը, անցումային դրույթները: Շահութահարկը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ հետեւյալ տվյալների հիման վրա. եթե հարկվող շահույթը կազմում է 7 մլն դրամից պակաս, ապա շահութահարկը հավասար է հարկվող շահույթի 15 տոկոսին, իսկ 7 մլն դրամից ավելիի դեպքում 1,05 մլն դրամ գումարած հարկվող շահույթի 7 մլն դրամը գերազանցող գումարի 25 տոկոսը:

Շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված հարկատուները՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաեւ հիմնական միջոցների եւ այլ ակտիվների իրացումից ստացված եւ այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10 տոկոսը: Շահութահարկից ազատվում են հասարակական, կրոնական եւ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները, կուսակցությունները, օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունները (որոշակի պայմանների դեպքում):

Ելույթ ունենալով երեկվա նիստում, ԱԺ պատգամավոր, ՀՀ հարկային տեսչության պետ Արտաշես Թումանյանը նկատեց, որ վերջին տարիների ընթացքում ՀՀ-ում շահութահարկը նվազող ֆինանսական ռեսուրս է եղել, եւ օրենքի նախագծի ընդունումը պետք է, որպեսզի «դուրս գանք ֆինանսական փոսից»: Ըստ Թումանյանի, հարկման «սիմետրիկ սխեմա է» պետք, այլ բնույթի սխեմա նշանակում է «հարկային արտոնություններով նոր բլոկ»: Թումանյանը ավելացրեց, որ բյուջեում միջոցներ պետք է նախատեսել Հայաստանի հաշվապահների իրազեկման համար:

Եղան նաեւ այլ կարծիքներ, առարկություններ: Չնայած դրանց, չնայած «Հանրապետություն» միավորման նիստի, ուր ընդունված որոշումը մնաց անհայտ, ինչպես ընդունված է, ԱԺ-ն ընդունեց օրենքի նախագիծը:

Այդ օգտվելով հրավիրված արտահերթ նիստից, կառավարությունը ներկայացրեց նաեւ հաջորդ օրենքի նախագիծը Ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու վերաբերյալ: Օրենքի նախագծի համաձայն հացի եւ մսագործության իրացումը ազատվում է ԱԱՀ-ից: Կառավարության մեկնաբանության համաձայն՝ օրենքի նախագծի ընդունումը նպատակամիտված է նրան, որ կասեցվեն հացի եւ ջեռուցման գների հնարավոր բարձրացումը: ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Ա. Դարբինյանը նշեց, որ պետական բյուջեից ջեռուցման ծախսերն ուղղվելու են միայն այն կառույցներին, որոնք հատուկ ամրագրված օրենքում, իսկ մնացած բոլոր հիմնարկների ջեռուցման խնդիրը պետք է լուծեն տեղական ինքնակառավարման մարմինները:

ԱԺ-ի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանն անընդունելի համարեց արդեն ընդունված օրենքում հրնթացս փոփոխություն կատարել. «Օրենքը ընդունվել է, պետք է աշխատել օրենքի սահմաններում, թե չէ էսօր լավ է, վաղը վատ»: Հարկային արտոնություն տալը տվյալ դեպքում օգուտ չի բերել: Եղիազարյանը ուշագրավ փաստ նշեց, այն է հայաստանցիները տարեկան ծխում են 5-6 միլրդ հատ ծխախոտ:

Վիկտոր Դալլաքյանը նկատեց, որ որեւէ սոցիալական հարց չի լուծվում այս օրենքի ընդունմամբ: Սրանք իրավիճակային լուծումներ են: Ըստ Դալլաքյանի՝ փորձ է կատարվում ԱԺ-ն վերածել դակիչի: Նա նշեց նաեւ, որ այսօրինակ փոփոխությունները խմբակային եւ անձնական շահերի արդյունք են: Նշվեց, որ ԱԺ-ի համապատասխան հանձնաժողովի եզրակացությունն օրենքի նախագծի նկատմամբ բացասական է:

Բ. Արարքյանը փորձեց շեղել քննարկման ուղղությունը, նշելով, որ «անցումային ժամանակներում մոտեցումներ են անհրաժեշտ»: Նա կոչ արեց նաեւ ԱԺ-ի ամբիոնը չվերածել «էժանագին բուլվարային մամուլի»:

Գագիկ Պողոսյանը նշեց, որ ԱԺ-ն «նմանվում է օրերային շտաբի 2-3 ամսվա համար օրենքներ ետ ընդունում»:

Չնայած այսպիսի ձեւակերպումներին ու դիտողություններին ԱԺ-ն այս օրենքի նախագիծը եւս ընդունեց, միայն մեկ նոր ուղղում անելով, համաձայն որի մտադրության իրացումը ԱԱՀ-ից ազատումը ուժի մեջ է մինչեւ 98 թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Արտահերթ նիստից հետո պատգամավորներից մեկը մի հետաքրքիր տեսակետ հայտնեց, այն է ԱԺ-ի կարիքն այլեւս չկա, քանի որ կառավարությունը կարող է ոչ միայն որոշումներ, այլեւ օրենքներ ընդունել:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Ոսկու հանքավայրերը շահագործելու նախնական պայմանագիր

Սկիզբը էջ 1

Ավելացնենք, որ քաղաքական ենթատեքստից զատ, հարցի մեխը նաեւ Սողի հանքավայրն է, որի հետազոտական պաշարները չեն գիջում մնացած հանքավայրերի հետազոտված պաշարների գումարային գործակցին: Մասնավորապես այս առնչությամբ պաշտոնական Բաքուն հայտնել է, թե հայկական կողմը ստորգետնյա թունել է փորել եւ շահագործում է ոսկու հանքը: Հատկանշական է, որ Բաքվի «Զերկալո» օրաթերթը այս կապակցությամբ կանխատեսում է, որ հակամարտության գոտում ոսկեբեր հանքերը կարող են միջազգային տնտեսական դատարանում երկու ամերիկյան ընկերությունների բախման պատճառ դառնալ: Ըստ էության, ադրբեջանցի փորձագետների կարծիքով, տարածաշրջանի երկու հակամարտող երկրների ղեկավարությունները միեւնույն հանքավայրի վերաբերյալ կնքել են երկու պայմանագիր, ընդ որում երկուսն էլ ամերիկյան ընկերությունների հետ: Այս առումով հետաքրքրական է, որ անկախ իրավական եւ փաստացի բոլոր հնարավորություններից, ՀՀ կառավարության եւ ԱՄՆ համապատասխան ընկերության միջեւ դեռ չի գործում որեւէ պայմանագիր, հատկապես Հայաստանի վարչական տարածքում գտնվող ոսկու հանքավայրերի շահագործման վերաբերյալ: Սա, ըստ էության, ծրագիր է, որի առաջին փուլը՝ 10 մլն դոլար արժողությամբ, ներկայումս իրականացվում է ՀՀ կառավարության եւ ամերիկյան «Global Gold» ընկերության համատեղ ուժերով եւ վերաբերում է սոսկ Արարատի մարզում գործող ոսկու վերամշակման ֆաբրիկայի շահագործմանը: Միեւնույն ժամանակ, ծրագրում նախատեսված է նաեւ մեր հանրապետության երկու հանքավայրերի շահագործումը (ծրագրի երկրորդ եւ երրորդ փուլեր), որը, ըստ երեւույթին, իրականացվելու է ՀՀ կառավարության եւ կանադա-ամերիկյան «First Dynosty Mines» ընկերության միջեւ ստորագրվելիք պայմանագրի դրույթների համաձայն:

Երեկ, ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարար Գառնիկ Նանագուլյանի եւ հիշատակված ընկերության նախագահ Մարկուս Ռոնդոլֆի կողմից ստորագրվեց նախնական մի պայմանագիր, որն ըստ նախարարի «ուժի մեջ կմնա միայն ՀՀ ֆինանսների նախարարության, ընդերքի նախարարության, արդարադատության նախարարության եւ սեփականաշնորհման նախարարության քննարկումներից հետո, երբ կներկայացվի ՀՀ կառավարությանը՝ վավերացնելու»: Վերջնական պայմանագիրը կստորագրվի միայն վերջնական հավանություն ստանալուց հետո: Ինչպես նշեցին, պայմանագրի մեջ են մտնում Մեղրածորի եւ Սողի հանքավայրերը, ինչպես նաեւ պետք է կառուցվի հարստացուցիչ գործարան: Պայմանագրի ընդհանուր ժամկետը 20 տարի է, սակայն, պայմանավորվածություն կա, որ 4-5 տարիներում Հայաստանում կներդրվի շուրջ 190 մլն դոլար գումար: Նախատեսվում է ստեղծել մի շարք համատեղ ձեռնարկություններ մոտավորապես 5 ընկերություն:

Ինչ վերաբերում է Սողի հանքավայրի «վիճահարույց» լինելուն, արդա, ինչպես նշեց Մարկուս Ռոնդոլֆը, դժվար թե ներդրում կատարվի մի այնպիսի արտադրության մեջ, որի պատկանելության հարցը ներդրողի համար կասկած է առաջացնում: Գառնիկ Նանագուլյանն այս կապակցությամբ նշեց, որ Սողը միշտ էլ գտնվել է Հայաստանի վարչական քարտեզի վրա, ուստի եւ հարցը իմաստազուրկ է:

«31-Ի» ԳՈՐԾ

«Ուսի տեսորը հնչել էր...»

Վահան Հովհաննիսյանն իր վերջին խոսքը կավարտի այսօր

«Վահան Հովհաննիսյան+30» դատավարությունը մոտեցել է իր վերջնագծին, եւս մեկ դատական նիստ եւ ամբաստանյալները կավարտեն իրենց վերջին խոսքը: Երեկ, ԳԴ-ի լեփ-լեցուն դահլիճը ունկնդրեց այդ դատավարության «գլխավոր հերոսի»՝ ՀՅԴ ԳՄ-ի ներկայացուցիչ Վահան Հովհաննիսյանի վերջին խոսքը: Պրն Հովհաննիսյանը սկզբից ցանկացավ հայտարարեց, որ վերջին խոսքում չի անդրադառնալու ցուցմունքի տեսք ստացած ասեկոսեներին, առաջնորդվելով այն սկզբունքով, որ «եթե իրեղեն առացույց չկա, ուրեմն հանցակազմ չկա»: Եվ ինքը «պրոֆեսիոնալ ամբաստանյալ» լինելով փորձելու է ներկայացնել՝ ինչ էին պատրաստվում անել եւ ինչ ստացվեց:

Անդրադառնալով իրենց կալանավորման ժամանակաշրջանին՝ Վ. Հովհաննիսյանը հայտարարեց, որ «վայրի որս» էր սկսված, եւ իշխանությունները կարծում էին, թե վերջապես կխորտակեն թուլացած Դաշնակցությանը: Նա չժխտեց, որ հայտնի իրադարձությունները իսկապես թուլացրել էին կուսակցությունը, սակայն խորտակել չհաջողվեց: Այլ խոսքով, «արջը խփել էին, սակայն տանել չէին կարողանում», այսինքն՝ չէին կարողանում պատվով դուրս գալ դրանից: Շարունակությունը իշխանությունները տեսան նոր «որս» սկսելու մեջ եւ հրապարակվեցին Ազգային անվտանգության խորհրդի եւ Ազգային անվտանգության նախարարության հայտնի հայտարարությունները, որում նախապես տրվեցին հանցանքի որակումները՝ ահաբեկչություն եւ բանդիտիզմ: Վ. Հովհաննիսյանը շեշտեց, որ այս որակումները հրահանգ եղան իրավապահ մարմինների համար՝ «որսի շեփոր էր հնչել եւ ոհմակը սլացել էր առաջ»՝ նկատի ունենալով քննչական խմբին:

Վ. Հովհաննիսյանն ասվածն ավելի պարզաբանելու համար հիշեցրեց «ԱԱԽ-ը հայտարարությանը մասնակից» ՀՀՇ վարչության նախկին նախագահ Տեր-Հուսիկ Լազարյանի մի արտահայտությունը՝ կապված այդ դատավարության հետ: Պրն Հովհաննիսյանի տպավորությամբ՝ Տեր-Հուսիկը «շատ գեղեցիկ տվեց ստահակների էթիկն», ասելով, որ դրանք քաղաքական բնույթի հայտարարություններ են եղել, իսկ դատարանն ու քննչական խումբը բող ազատ գործեին՝ չկառչելով հայտարարության ոգից եւ բովանդակությունից: Որ իրենք ահաբեկչական խումբ չէին եւ վտանգ չէին ներկայացնում հասարակության համար: Վ. Հովհաննիսյանը դարձյալ հաստատեց իր ընդդիմադիրների բերանով: Նա հիշեցրեց ՀՀՇ վերջին համագումարում հնչած Լեւոն Տեր-Պետրոսյանի այն միտքը, որով հանրապետության նախագահը վերջին տարիներին Հայաստանի համար տագնապալից օրեր համարեց ՀԱԲ-ի լուծարումը եւ 96 թ. սեպտեմբերի 25-ը, բայց ոչ մի տեղ չհիշատակեց 95 թ. հուլիսի 29-ը՝ իրենց ձերբակալումը, որովհետեւ «իշխանությունները լավ էլ գիտեին, որ ապացույց չկա»:

Վահան Հովհաննիսյանն անդրադարձավ նաեւ «31-ի» դատավարության բացասական հետեւանքներին, որոնցից ուշագրավ էր հետեւյալը. հայրենասիրություն, անկախություն, ազգասիրություն եւ մի շարք այլ բարձրարժեք հասկացությունների հետ իշխանությունները իմաստազրկեցին նաեւ դավաճանություն հասկացությունը: «Երբ իշխանությունը բախվի իսկական դավաճանության հետ, ստիպված կլինի բախվել հայության անտարբեր հայացքի ներքո: Նրան կհիշեցնեն, որ ժամանակին Մանվել Եղիազարյանին էլ էին իբրեւ դավաճանի դատում»:

Հայաստանում իրավական համակարգի կախյալ լինելը նա փաստարկեց ծավալուն մեկնաբանություններով, որից առանձնացրեց այն միտքը, թե Հայաստանում երբեք մարդուն արդարացնող դատավճիռ չի կայացվել: «Պատվերի սահմաններից դատարանը երբեք դուրս չի գալիս», հայտնեց Վ. Հովհաննիսյանը՝ միաժամանակ շնորհավորելով դատապաշտպաններին՝ նրանց հաջողությունը համարելով Հայաստանում անկախ պաշտպանական համակարգի հիմնաքարը դնելու համար: Վ. Հովհաննիսյանն իր վերջին խոսքը կշարունակի այսօր:

Ս. Պ.

ՏԱՍՏԱՌՈՏ

ՀԲԸՄիությունը 240 հազար դոլար է տրամադրել Երեւանի դպրոցներին

ԵՐԵՎԱՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. 240 հազար դոլար է հատկացրել Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Երեւանի քաղաքապետարանին ջեռուցման տեղային համակարգեր ձեռք բերելու եւ մայրաքաղաքի 72 դպրոցներում տեղադրելու համար: 13 դպրոցներում ջեռուցման տեղային համակարգերը (կվարցային սալիկներ) արդեն փորձարկվել են: Ձմռան սեզոնին դպրոցների մի մասը կաշխատի երկհերթ, քանի որ կվարցային սալիկները տեղադրվում են յուրաքանչյուր դպրոցում 30 դասասենյակի հաշվարկով: Մնացած 126 միջնակարգ դպրոցների ջեռուցման համար միջոցների հայթայթումը եւ աշխատանքների կազմակերպումը հանձնարարվել է քաղաքապետարաններին:

Երեւանում նորի՞ց էլեկտրաէներգիայի հովհարային անջատումներ

ԵՐԵՎԱՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Երեւանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանի կարծիքով, անհրաժեշտ է էլեկտրաէներգիայի դիմաց կուտակված պարտքերի պատճառով վերականգնել հովհարային անջատումների գրաֆիկը: Քաղաքապետարանում աշխատանքային վերջին խորհրդակցության ժամանակ քաղաքապետը հայտարարել է բացօթյա ժամանակավոր առեւտրական կետերի («սեղանիկների») հետագա գոյության անմոտակահարմարության մասին:

Արմենտելի մասին դարձյալ նորություններ չկան

ԵՐԵՎԱՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ՀՀ վարչապետի մամուլի գրասենյակից «Նոյյան տապանի» թղթակցին հայտնեցին, որ Արմենտել ընկերության մրցույթային վաճառքի արդյունքների մասին առայժմ տեղեկություններ չկան: Նախկինում հայտնվել էր, որ արդյունքները կհրապարակվեն սեպտեմբերի վերջին՝ նախապես հայտարարված ժամկետից (սեպտեմբերի 15) երկու շաբաթ ավելի ուշ: Համաձայն «Նոյյան տապանի» տեղեկությունների, հունական OTE ընկերության նախագահ Դեմետրիս Պապուլիասը հայտնել է, որ Արմենտելի վաճառքի մասին վերջնական որոշումը սպասվում է հոկտեմբերի 15-ին: OTE-ի գլխավորած կոնսորցիումը հանդիսանում է Արմենտելի գնման հիմնական հավակնորդներից մեկը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
թաղ. 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Տղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՄԲԱԳԻԿ

ՏԵՍԱԿԵՏ

Վազգեն Մանուկյանը «ջախջախեց» Տեր-Պետրոսյանի հայացքները, թեեւ չուրացավ վերջինիս լավ հատկությունը...

Վազգեն Մանուկյանը անցած հինգշաբթի անցկացրած հանրահավաքից հետո լրագրողներին երկար սպասեցնել չտվեց եւ հրավիրեց մի նոր հանդիպում Լեւոն Տեր-Պետրոսյանի ասուլիսի վերաբերյալ իր տեսակետները հայտնելու նպատակով: Հիմնական գնահատականը. այդ ասուլիսով Լեւոն Տեր-Պետրոսյանը շաս «կարճացրեց մեր վերմակի երկարությունը»: Այսինքն, անդրադառնալով Ղարաբաղի խնդրին, նա նշեց, որ ժողովուրդը շաս լավ գիտակցում է, թե ինչ է նշանակում փոխզիջում: Բայց Տեր-Պետրոսյանի առաջարկածը ոչ թե փոխզիջում էր, այլ «կապիտուլյացիա»: Կա նաեւ կարծիք, թե Լեւոն Տեր-Պետրոսյանը նման քայլ է կատարում, որպեսզի ժողովրդի հակառակ արձագանքը ստանալով, արտաքին ափխարհին ապացուցի, որ նման ձեւով չի կարելի հարցը լուծել: Բայց քանի որ Վազգեն Մանուկյանը շաս լավ է ճանաչում Լեւոն Տեր-Պետրոսյանին, նրա էությունը, ապա չի կարծում, թե դա խաղ է:

«Եթե նույնիսկ խաղ լիներ, ապա դա ոչ միայն մանկամիտ խաղ էր, այլեւ դավաճանություն», ասաց նա եւ շարունակեց «Ես համարում եմ պետական հանցագործություն այն գաղափարները, որոնք ասվեցին Ղարաբաղի հարցի շուրջը»: Բանակցությունների պահին, երբ երկու կողմը փորձում են գտնել փոխզիջումների ճանապարհ, Տեր-Պետրոսյանը փորձեց սպառնալ մեր ժողովրդին եւ ակնարկեց ուրիշներին, որ սպառնան մեր ժողովրդին Բոսնիայով, ռազմական, քաղաքական, տնտեսական ճնշումներով, որպեսզի մեր ժողովուրդը ընդունի նրանց ցանկացածը: Իսկ դա ներկա պահին կբերի Աղրբեջանի դիրքորոշումների կարծրացման: Փորձվում է սեպ խրել նաեւ Հայաստանի ու Ղարաբաղի ժողովուրդների միջեւ ասելով, թե մինչեւ Ղարաբաղի հարցը չլուծվի, նորմալ պետություն չենք դառնա: Իսկ բոնությունները սկսվել են հենց ներկա իշխանությունների կողմից, որոնք եւ 1995 թ. խորհրդարանական եւ 1996 թ. նախագահական ընտրությունների ժամանակ արեցին ամեն ինչ, որ բռնի ուժով պահեն իրենց դիրքերը: Սա էր ԱԺՄ նախագահի գնահատականը:

Իսկ մեր այն հարցին, թե Վ. Մանուկյանն ինքն ինչպես է պատկերացնում Ղարաբաղի խնդրի լուծումը, թեկուզ փոխզիջումային, պատասխանեց, թե ինքը չի կարծում, որ այդ հարցը հիմա հեշտությամբ կլուծվի: Դա երկար ժամանակ է պահանջում: «Ես չեմ տեսնում մի գաղտնի պահած մաթեմատիկական լուծում, որը սեղանի վրա դնելով, բոլոր կողմերը բավարարված կլինեն», ասաց նա, միաժամանակ չբացառելով բազմաթիվ այլ լուծումներ: Բայց քանի որ ինքը չի կարող հետեւել գաղտնի բանակցություններին, ուղղակի ասաց. «Այս խմորը դեռ շաս ջուր կվերցնի»: Ի հարկե պետք է լուծվեն եւ փախստականների եւ տարածքային եւ կարգավիճակի հարցերը, բայց շտապողականությունը խորացնելու է լուծումը, այլ ոչ թե նպաստելու դրան: Իսկ բուն լուծումը 5 տարբերակի բաժանելը համարեց արհեստական:

Այնուհետեւ Վ. Մանուկյանը քննադատեց Տեր-Պետրոսյանի միտքը կազմված ազգային գաղափարախոսության հետ: Նրա կարծիքով, ազգային գաղափարախոսությունը պարզ բան է եւ դա ունեն բոլոր պետությունները, այդ թվում Ճապոնիան, Գերմանիան, Ֆրանսիան եւ նույնիսկ ԱՄՆ-ը: Որպես օրինակ նա մեջբերեց Ճապոնիայի նախկին վարչապետի Նակասոնեի խոսքը, թե դպրոցներում նկատվող հայրենասիրության սպագումը ազդում է նաեւ դպրոցականների մտավոր կարողությունների վրա:

Իսկ մեր հետեւյալ հարցին, թե «Դուք Ձեզ մեղավոր չե՞ք ճանաչում, որ ժամանակին Ղարաբաղ կոմիտեի կազմում ընդգրկել եք մի մարդու, որն ըստ Ձեզ լավ չի ըմբռնում հարցի լուծման ազգային տարբերակը եւ փաստի առաջ է կանգնեցնում բոլորիս», նա պատասխանեց. «Այնուամենայնիվ, հիշեք, երբ որ Ղարաբաղ կոմիտե էինք հավաքում, այն ժամանակ պարզ չէր, մենք գալու ենք իշխանության, թե ոչ: Երբեք այդպիսի հարց դրված չի եղել: Լեւոն Տեր-Պետրոսյանն ինձ համար մի զարմիչ հատկություն ուներ, որը հիմա ինչ-որ իմաստով դուրս է գալիս մեր դեմ էլ: Առաջին ամիսը, երբ ինքը Ղարաբաղ կոմիտեում էր, ես զարմանով տեսա մի հատկություն, որ եթե իր մեջ որեւէ միտք է մտցվում, անկախ նրանից ո՞վ է մտցնում, ինքը տանկի պես այդ ուղղությամբ գնում է: Իրավիճակը փոխվում է, հանգամանքները փոխվում են, ինքը շարունակում է այդ գծով գնալ: Մենք երբեմն այդ պատճառով բանակցությունների ժամանակ ընկնում էինք ծանր վիճակի մեջ: Հասկանում էինք, որ պետք է կորը փոխվի, բայց ինքը շարունակում էր նույն կորով գնալ:

ԱԶԳ

Ոչ տարածքային կառույցներ

Նորից սեփականաշնորհման հետևանքների մասին

Հայաստանի գյուղատնտեսության մասին գրել եւ չանդրադառնալ հողի սեփականաշնորհմանը անհնար է: Թվում է՝ գրվել է բավարար չափով, վերլուծվել, բայց դրա հետեւանքներն ու ազդեցության չափերը օրեցօր ավելի ու ավելի են զգացնել տալիս: Ոչ մի համաստաված կոլեկտիվացում իր կուլակաթափով ու աջ թեքման դեմ ոգայարով չի կարող համեմատվել անկախ Հայաստանում 1992-93 թվերին իրականացված հողի սեփականաշնորհման հետ: Հայտնի կատակ-ճշմարտություն է. «Ոչ թե հողը հանձնեցին գյուղացուն, այլ գյուղացուն՝ հողին»: Այսօր գյուղատնտեսության նախարարությունում կիսաոդաս խոսակցություններ են անում սեփականաշնորհման ժամանակ թույլ տված սխալների մասին (հատկապես անհատագլխամասնակի եւ մեծենայական ոգակի սեփականաշնորհման հարցերում, երբ, ասենք, կոմբայնը բաժին էր հասնում մեկին, շարքացանը՝ մյուսին): Սակայն դրանց հստակ վերլուծություն (մեղավորների բացահայտմամբ), սխալներից դասեր քաղելու, ընկելու, հետեւելու ոգեւորություն չեմ տեսնում: Դրանք հանրությունը պետք է իմանա, որպեսզի հետագայում նրանք չկրկնվեն: Ինչպես ասում է Ռուսաստանը, նրանք չի ընդունում հողի հետ կապված արմատական փոփոխություններ անելու: Մերոնք ասում են, եթե հողը չսեփականաշնորհեինք, այս տարիներին «սովից կոտորված» կլինեինք: Ուրեմն՝ սեփականաշնորհումը լուծել է ոգարգոյացման խնդիր, որտեղ բացառվում է աղրանքային ծավալուն արտադրությունը, հողի տուկայի, գնորդի տուկայի ձեւավորումը, բարձրորակ, միջազգային ստանդարտներին համապատասխանող սննդամթերքի արտադրությունը եւ արտահանումը: Ուրեմն՝ այսօր ասել, թե տուժով կգնա ֆերմերային տնտեսությունների խոշորացում (որոնք բարձր արդյունավետություն կապահովեն), հողի մշակման կուլտուրայի բարձրացում՝ առնվազն աչկապություն է:

Չկա հողի տուկա եւ մոտ ժամանակներս չի էլ լինի: Հողի առուվաճառք այսօր գրեթե չի կատարվում, անգամ եթե կատարվում է՝ իրական գներից շատ ցածր արժեքներով: Գյուղացին իր 1 հա հողն անգամ մշակելու իմաստը չի տեսնում. դա շատ ավելի մեծ չարչարանք, ներդրումներ է պահանջում եւ ավելի կրճատումը: Շատ է խոսվում խաղողի այգիների հատման մասին. դրանք 34 հազար հա-ից հասել են 14 հազարի: Դեռ անցյալ տարվա դիմաց խաղողի վերամշակող օբյեկտները 1 մլրդ դրամից ավելի պարտք են գյուղացուն: Ոչ միայն խաղողի գնման գինն է ցածր, այլեւ շատ տեղերում պարզապես չեն ընդունում: Տեղական արտադրության գինին վաղ է վաճառվում եւ գրեթե չի արտահանվում (իսկ 1980-85թթ. Հայաստանից արտահանվել է 9,5 մլն դեկալիտր գինի, 350-400 հազար դեկալիտր կոնյակ): Ուրեմն, ոչ միայն խաղողի ընդունումն է նվազում, այլեւ՝ աշխատատար խաղողի (հատկապես տեխնիկական սորտերի) արտադրությունը: Իսկ խաղողի այգիների հատումն արդեն ազգային հարստության կորուստ է եւ պետական անհեռատես քաղաքականության արդյունք: Այժմ որքան էլ գյուղատնտեսության նախարարությունը «Խաղող» ծրագիրը մշակի եւ խաղողի արտադրության մեջ ներդրումներ նախատեսի, մոտ ապագայում խաղողի արտադրության վերելք ապահովել հնարավոր չի լինելու:

Վերամշակող արտադրությունն այժմ չի գործում: Հնացած տեխնոլոգիաներով, երբեմնաքաղ միջոցների պակասով, համաշխարհային ազգ լինելու հավակնություններ ունեցող ժողովրդի համար այդ բացատրությունն առնվազն անընդունելի է: Չէ՞ որ մինչ օրս Ռուսաստանը չի ետադարձում հողի հետ կապված արմատական փոփոխություններ անել: Մերոնք ասում են, եթե հողը չսեփականաշնորհեինք, այս տարիներին «սովից կոտորված» կլինեինք: Ուրեմն՝ սեփականաշնորհումը լուծել է պարզ գոյատեւման խնդիր, որտեղ բացառվում է աղրանքային ծավալուն արտադրությունը, հողի տուկայի, գնորդի տուկայի ձեւավորումը, բարձրորակ, միջազգային ստանդարտներին համապատասխանող սննդամթերքի արտադրությունը եւ արտահանումը: Ուրեմն՝ այսօր ասել, թե տուժով կգնա ֆերմերային տնտեսությունների խոշորացում (որոնք բարձր արդյունավետություն կապահովեն), հողի մշակման կուլտուրայի բարձրացում՝ առնվազն աչկապություն է:

Չկա հողի տուկա եւ մոտ ժամանակներս չի էլ լինի: Հողի առուվաճառք այսօր գրեթե չի կատարվում, անգամ եթե կատարվում է՝ իրական գներից շատ ցածր արժեքներով: Գյուղացին իր 1 հա հողն անգամ մշակելու իմաստը չի տեսնում. դա շատ ավելի մեծ չարչարանք, ներդրումներ է պահանջում եւ ավելի կրճատումը: Շատ է խոսվում խաղողի այգիների հատման մասին. դրանք 34 հազար հա-ից հասել են 14 հազարի: Դեռ անցյալ տարվա դիմաց խաղողի վերամշակող օբյեկտները 1 մլրդ դրամից ավելի պարտք են գյուղացուն: Ոչ միայն խաղողի գնման գինն է ցածր, այլեւ շատ տեղերում պարզապես չեն ընդունում: Տեղական արտադրության գինին վաղ է վաճառվում եւ գրեթե չի արտահանվում (իսկ 1980-85թթ. Հայաստանից արտահանվել է 9,5 մլն դեկալիտր գինի, 350-400 հազար դեկալիտր կոնյակ): Ուրեմն, ոչ միայն խաղողի ընդունումն է նվազում, այլեւ՝ աշխատատար խաղողի (հատկապես տեխնիկական սորտերի) արտադրությունը: Իսկ խաղողի այգիների հատումն արդեն ազգային հարստության կորուստ է եւ պետական անհեռատես քաղաքականության արդյունք: Այժմ որքան էլ գյուղատնտեսության նախարարությունը «Խաղող» ծրագիրը մշակի եւ խաղողի արտադրության մեջ ներդրումներ նախատեսի, մոտ ապագայում խաղողի արտադրության վերելք ապահովել հնարավոր չի լինելու:

Վերամշակող արտադրությունն այժմ չի գործում: Հնացած տեխնոլոգիաներով, երբեմնաքաղ միջոցների պակասով, սեռ ծրագիրը (1 կգ-ի դիմաց գյուղացին 1,5 կգ էր վերադարձնում): Անկախ բոլոր հաշվարկներից՝ բարձր է ոռոգման ջրի վարձը: Ընդհանրապես ոռոգման հարցերում լուրջ պրոբլեմներ կան. «Հայջրսնս» ձեռնարկությունը, որ պահպանել է խորհրդային ժամանակների կառուցվածքն ու աշխատանքը՝ մոտ 3000 աշխատող ունի (120 հոգանոց ապարատ): Բայց Հայաստանի 74 ջրամբարները բարվոք վիճակում չեն: Անմխիթար վիճակում է նաեւ ոռոգման ցանցը. 100 լիտր ջրից 42-ը ճանապարհին կորչում է: Հիմնականում խորհրդային պոմպերով մղվող ջրի վարձի 70 տոկոսը հոսանքի ծախսն է, որն էլ ջրի սակագնի բարձրացման հիմնական պատճառն է: Այսօր գյուղացին ջրի վարձի 55-60 տոկոսն է վճարում: Եվ գյուղնախարարությունում ափսոսում են, որ իրենք էլ էներգախիստ համակարգը, որի հիմնական խնդիրը պետք է լիներ արտադրող սուբյեկտների բարենպաստ գործունեության ապահովումը: Այսօր այդ գործունեության համար [illegible] դարձ շատ անբարենպաստ է, այն ոչ միայն հանգեցնում է եղած միջոցների վերջնական կորստին, հողի ամլացմանը, բնապահպանական իրավիճակի վատացմանը, այլեւ՝ հողօգտագործման կուլտուրայի վերջնական անկմանը եւ մեր տուկայի կախվածությանն արտաքիններից: Շատ արտադրություններ ադեսայի չափով կրճատվել են: Խաղողին ավելացրեք արտադրությունից ծխախոտի ու խորդենու դուրս մղվելը, ոչխարաբուծության, խոզաբուծության եւ թռչնաբուծության անկումը (բդի իրացման անհնարինության հետ զուգահեռ), գինեգործության, պահածոների, հրուշակեղենի արտադրության խիստ նվազումը:

Անասնապահության մեջ մոռացվել է արհեստական սերմնավորման համակարգը, չեն գործում տրիմային կայանները: Պատահական խաչասերումների պատճառով խիստ տուժել է անասունների գենոֆոնդը: Թեեւ պետականորեն հակահամաճարակային պատվաստումները պարտադիր եւ անվճար պիտի կատարվեն, բայց սուր վարակիչ հիվանդությունների տարածումը անկառավարելի է դարձել: Բուսաբուծության մեջ սերմերի բարձացման գործընթացը բավարար չի ընթանում: Ասենք, տարեկան անհրաժեշտ 120 հազար տոննա հացահատիկի բարձր տեսակի սերմի դիմաց այս տարի բերվել է ընդամենը 500 տոննա սուորեր էլիտա կամ էլիտա սերմ:

Այժմ պետությունը ոչ միայն բարենպաստ պայմաններ չի կարողանում ապահովել գյուղացու համար, ոչ միայն չի խթանում արտադրությունը, չի օգնում իրացմանը եւ արտահանմանը, չի ապահովում նրան վառելիքով, արհեստամատերով, սերմերով, պարարտանյութով, այլեւ իր հարկային քաղաքականությամբ, իր ծառայությունների բարձր գներով, արդյունաբերության մեջ սեփականաշնորհման ար սեալոր քաղաքականությամբ խանգարում է նրան (38 հացի գործարաններից 17-ում սեփականաշնորհում չի իրականացվել բարձր գնահատման պատճառով. օրինակ՝ թիվ 7 հացի գործարանը գնահատվել է 5,7 մլրդ դրամ):

1997 թվականին այս ոլորտին բյուջեից հատկացվել է 2 մլրդ 551 մլն դրամ, որից 1,175-ը հողաշինարարական աշխատանքների համար: Սինդրոմ բարեփոխումների ծրագրում նշված է որ ագրոարեւանային ոլորտի նյութատեխնիկական բազայի զարգացման համար 1997-2000 թթ. անհրաժեշտ է կատարել 228 մլրդ դրամ ներդրում:

Մեկ հոդվածում հնարավոր չէ անդրադառնալ գյուղատնտեսության բոլոր ոլորտներին: Վարկերը, մեծածախ տուկայի կատեգորիան գաղափարը, գիտա-կրթական եւ ոռոգման համակարգերի բարեփոխումները, «Ագրոգիտատիպ» ձեռնարկությունը, գյուղական տեխնիկան եւ գյուղատնտեսական տնտեսությունների սպասարկման հարցերը, ադահովագրական համակարգը, մինչ օրս չձեւավորված հողային կադաստրը մեկ այլ ավելի ծավալուն հոդվածի նյութ է:

Կառավարում

Այս ոլորտում քաղաքականությունն իրականացնում է գյուղատնտեսության նախարարությունը: 239 աշխատող ունի այս հսկան. նախարարի վեց տեղակալ, 19 վարչություն, 6 տեսչություն եւ այլն: Թեեւ նախարար Վլադիմիր Մովսիսյանը գտնում է՝ «որքան մեծ է աշխատակազմը, այնքան վատ է աշխատում», իսկ փոխնախարար Իշխան Մարտիրոսյանը, որին վեց տարի առաջ են հրավիրել Ֆրանսիայից, ասում է, որ ինքը 20 հոգանոց ապարատ կդահեր, բայց, չգիտես ինչու, կրճատումներ եւ կառուցվածքային փոփոխություններ

Մեր նախարարությունները ներսուդրսից

Հողի մեջ թաղված ծանրամարմին հսկան

Գյուղատնտեսության նախարարությունը դժվա՛ր է վերափոխվում

Գյուղատնտեսությունն այսօր մեր երկրի բնակչությանը զբաղվածության ամենամեծ հնարավորություններն է ընձեռում: Տնտեսության առավելագույնս անկախ մի ճյուղ, որը միշտ գործել է ու կգործի չնայած բազում խոչընդոտներին: Իսկ հայ հողագործը ավանդաբար հողին կապված ու հողից «հաց քամող», իր հույսը բացառապես հողի ու նրա տված բարիքի հետ է կապել, այլ ոչ թե պետության վարած սոցիալ-տնտեսական քաղաքականության ու աշխարհաքաղաքական դրական գործընթացների:

անները նվազեցնելու աշխատանք գրեթե չի տարվում: Արդյունքում, նախարարի բնորոշմամբ, գյուղատնտեսությունը հայտնվել է ֆեոդալականի կարգավիճակում: Բոլոր գործընթացները ինքնահոս ընթացք են ստացել եւ պետական ջանքերն այդ ընթացքը փոխել անզոր են: Այժմ վատերով:

Սեփականաշնորհման արդյունքում ստեղծվել են 321 հազար գյուղացիական եւ 1200 կոլեկտիվ տնտեսություններ: Գյուղատնտեսության, սննդի եւ վերամշակող արդյունաբերության, առեւտրի եւ սպասարկումների 952 ձեռնարկություններից սեփականաշնորհված են 346-ը: Յուրաքանչյուր գյուղացիական տնտեսություն միջին հաշվով ունի 1,4 հա հողաստարածք (վարելահող, խոտհարք եւ այլն միասին): Այսինքն՝ ողջ օգտագործվող հողը բաժանվել է մանր, բնամթերային տնտեսությունների, որոնք ապրանքային արտադրություն չեն կազմակերպում (իրենց արտադրանքը տուկա չեն հանում): Սրանք զբաղված են պարզ վերարտադրությամբ՝ իրենց ընտանիքը կերակրելով: Այս տնտեսություններում աշխատող հայ ֆերմերները (քառն անգամ ծանր է նշանակում), միջնադարյան բրիչով զինված, հողամշակման տարական կուլտուրա չպահպանող, պարարտանյութ, ժամանակակից տեխնոլոգիաներ ու մեթոդներ չկիրառող աշխատանքով են զբաղված: Տասնյակ տարիների ընթացքում ձեռք բերվածն էլ մի հարվածով մոռացության են մատնել ու զբաղված են անգրագետ ու անարդյունավետ վերարտադրությամբ:

1985-ի համեմատ 1995 թ. բուսաբուծական արտադրանքի համախառն բերքը կրճատվել է 220 հազ. տոննայով (13,4 տոկոս), կարտոֆիլը եւ մսինը՝ 200 հազար (1/3-ով), ձվինը՝ 382 մլն հատով (67 տոկոսով): Թեեւ ասում են, որ վերջին տարիներս կա աճի միտում, բայց դա մեր կյանքում դեռեւս չի զգացվում:

Չնայած մշակվող ցանքատարածությունները վերջին տարիներին մեծացել են, բայց բերքատվությունն իջնելու պատճառով արդյունքը նվազել է: Սրա պատճառն էլ պետք է փնտրել նախնադարյան մեթոդներով, վատորակ սերմով հողը մշակելու, ջրի ու պարարտանյութի օպտիմալ հարաբերակցության խախտման մեջ: Արդյունքում ոչ միայն գյուղատնտեսական արտադրանքն է նվազել, այլեւ հողն է վնասվել, ստացվող արտադրանքի որակն է ընկել: Ընդամենը 2 մլն ֆերմեր ունեցող ամերիկյան տնտեսությունը ոչ մի այն լիուլի բավարարում է իր սննդի կարիքները (մոտ 300 մլն բնակչություն ունենալով) այլեւ ողջ աշխարհը ողողել է իր ապրանքներով: Սեզանում 321 հազար տնտեսություն (700 հազարից ավելի աշխատող) չեն կարողանում կերակրել 3 մլն մարդու:

Հանրապետության ողջ հողատարածքը մանրատած գյուղատնտեսության նախարարության աշխատակիցները սեփականաշնորհման սխալների պատճառները բացատրում են աշխարհում դրա նախադեպի բացակայությամբ: Համաշխարհային ազգ լինելու հավակնություններ ունեցող ժողովրդի համար այդ բացատրությունն առնվազն անընդունելի է: Չէ՞ որ մինչ օրս Ռուսաստանը չի ետադարձում հողի հետ կապված արմատական փոփոխություններ անելու: Մերոնք ասում են, եթե հողը չսեփականաշնորհեինք, այս տարիներին «սովից կոտորված» կլինեինք: Ուրեմն՝ սեփականաշնորհումը լուծել է պարզ գոյատեւման խնդիր, որտեղ բացառվում է ապրանքային ծավալուն արտադրությունը, հողի տուկայի, գնորդի տուկայի ձեւավորումը, բարձրորակ, միջազգային ստանդարտներին համապատասխանող սննդամթերքի արտադրությունը եւ արտահանումը: Ուրեմն՝ այսօր ասել, թե տուժով կգնա ֆերմերային տնտեսությունների խոշորացում (որոնք բարձր արդյունավետություն կապահովեն), հողի մշակման կուլտուրայի բարձրացում՝ առնվազն աչկապություն է:

Չկա հողի տուկա եւ մոտ ժամանակներս չի էլ լինի: Հողի առուվաճառք այսօր գրեթե չի կատարվում, անգամ եթե կատարվում է՝ իրական գներից շատ ցածր արժեքներով: Գյուղացին իր 1 հա հողն անգամ մշակելու իմաստը չի տեսնում. դա շատ ավելի մեծ չարչարանք, ներդրումներ է պահանջում եւ ավելի կրճատումը: Շատ է խոսվում խաղողի այգիների հատման մասին. դրանք 34 հազար հա-ից հասել են 14 հազարի: Դեռ անցյալ տարվա դիմաց խաղողի վերամշակող օբյեկտները 1 մլրդ դրամից ավելի պարտք են գյուղացուն: Ոչ միայն խաղողի գնման գինն է ցածր, այլեւ շատ տեղերում պարզապես չեն ընդունում: Տեղական արտադրության գինին վաղ է վաճառվում եւ գրեթե չի արտահանվում (իսկ 1980-85թթ. Հայաստանից արտահանվել է 9,5 մլն դեկալիտր գինի, 350-400 հազար դեկալիտր կոնյակ): Ուրեմն, ոչ միայն խաղողի ընդունումն է նվազում, այլեւ՝ աշխատատար խաղողի (հատկապես տեխնիկական սորտերի) արտադրությունը: Իսկ խաղողի այգիների հատումն արդեն ազգային հարստության կորուստ է եւ պետական անհեռատես քաղաքականության արդյունք: Այժմ որքան էլ գյուղատնտեսության նախարարությունը «Խաղող» ծրագիրը մշակի եւ խաղողի արտադրության մեջ ներդրումներ նախատեսի, մոտ ապագայում խաղողի արտադրության վերելք ապահովել հնարավոր չի լինելու:

Վերամշակող արտադրությունն այժմ չի գործում: Հնացած տեխնոլոգիաներով, երբեմնաքաղ միջոցների պակասով, սեռ ծրագիրը (1 կգ-ի դիմաց գյուղացին 1,5 կգ էր վերադարձնում): Անկախ բոլոր հաշվարկներից՝ բարձր է ոռոգման ջրի վարձը: Ընդհանրապես ոռոգման հարցերում լուրջ պրոբլեմներ կան. «Հայջրսնս» ձեռնարկությունը, որ պահպանել է խորհրդային ժամանակների կառուցվածքն ու աշխատանքը՝ 3000 աշխատող ունի (120 հոգանոց ապարատ): Բայց Հայաստանի 74 ջրամբարները բարվոք վիճակում չեն: Անմխիթար վիճակում է նաեւ ոռոգման ցանցը. 100 լիտր ջրից 42-ը ճանապարհին կորչում է: Հիմնականում խորհրդային պոմպերով մղվող ջրի վարձի 70 տոկոսը հոսանքի ծախսն է, որն էլ ջրի սակագնի բարձրացման հիմնական պատճառն է: Այսօր գյուղացին ջրի վարձի 55-60 տոկոսն է վճարում: Եվ գյուղնախարարությունում ափսոսում են, որ իրենք էլ էներգախիստ համակարգի նման չեն անցել անհատական հաշվիչների համակարգին (ուրախանչյուր չվճարողի ջուրը կկտրեինք՝ ամեն ինչ տեղը կընկներ): Իրականում ծախսերից այլ չբացող գյուղացին փորձում է գոնե այնտեղ, որտեղ հնարավոր է, տնտեսել:

Շարաք կյանքով նա հազիվ օրվա հացն է վաստակում՝ այլեւս չմտածելով շահույթ ստանալու, իր կյանքը բարելավելու, առավել եւս վաղվա օրվա մասին: Նման պայմաններում պատասխանատվության իր բաժինն ունի նաեւ տվյալ կառավարման համակարգը, որի հիմնական խնդիրը պետք է լիներ արտադրող սուբյեկտների բարենպաստ գործունեության ապահովումը: Այսօր այդ գործունեության համար [illegible] դարձ շատ անբարենպաստ է, այն ոչ միայն հանգեցնում է եղած միջոցների վերջնական կորստին, հողի ամլացմանը, բնապահպանական իրավիճակի վատացմանը, այլեւ՝ հողօգտագործման կուլտուրայի վերջնական անկմանը եւ մեր տուկայի կախվածությանն արտաքիններից: Շատ արտադրություններ ադեսայի չափով կրճատվել են: Խաղողին ավելացրեք արտադրությունից ծխախոտի ու խորդենու դուրս մղվելը, ոչխարաբուծության, խոզաբուծության եւ թռչնաբուծության անկումը (բդի իրացման անհնարինության հետ զուգահեռ), գինեգործության, պահածոների, հրուշակեղենի արտադրության խիստ նվազումը:

Անասնապահության մեջ մոռացվել է արհեստական սերմնավորման համակարգը, չեն գործում տրիմային կայանները: Պատահական խաչասերումների պատճառով խիստ տուժել է անասունների գենոֆոնդը: Թեեւ պետականորեն հակահամաճարակային պատվաստումները պարտադիր եւ անվճար պիտի կատարվեն, բայց սուր վարակիչ հիվանդությունների տարածումը անկառավարելի է դարձել: Բուսաբուծության մեջ սերմերի բարձացման գործընթացը բավարար չի ընթանում: Ասենք, տարեկան անհրաժեշտ 120 հազար տոննա հացահատիկի բարձր տեսակի սերմի դիմաց այս տարի բերվել է ընդամենը 500 տոննա սուորեր էլիտա կամ էլիտա սերմ:

Այժմ պետությունը ոչ միայն բարենպաստ պայմաններ չի կարողանում ապահովել գյուղացու համար, ոչ միայն չի խթանում արտադրությունը, չի օգնում իրացմանը եւ արտահանմանը, չի ապահովում նրան վառելիքով, արհեստամատերով, սերմերով, պարարտանյութով, այլեւ իր հարկային քաղաքականությամբ, իր ծառայությունների բարձր գներով, արդյունաբերության մեջ սեփականաշնորհման ար սեալոր քաղաքականությամբ խանգարում է նրան (38 հացի գործարաններից 17-ում սեփականաշնորհում չի իրականացվել բարձր գնահատման պատճառով. օրինակ՝ թիվ 7 հացի գործարանը գնահատվել է 5,7 մլրդ դրամ):

1997 թվականին այս ոլորտին բյուջեից հատկացվել է 2 մլրդ 551 մլն դրամ, որից 1,175-ը հողաշինարարական աշխատանքների համար: Սինդրոմ բարեփոխումների ծրագրում նշված է որ ագրոարեւանային ոլորտի նյութատեխնիկական բազայի զարգացման համար 1997-2000 թթ. անհրաժեշտ է կատարել 228 մլրդ դրամ ներդրում:

Մեկ հոդվածում հնարավոր չէ անդրադառնալ գյուղատնտեսության բոլոր ոլորտներին: Վարկերը, մեծածախ տուկայի կատեգորիան գաղափարը, գիտա-կրթական եւ ոռոգման համակարգերի բարեփոխումները, «Ագրոգիտատիպ» ձեռնարկությունը, գյուղական տեխնիկան եւ գյուղատնտեսական տնտեսությունների սպասարկման հարցերը, ադահովագրական համակարգը, մինչ օրս չձեւավորված հողային կադաստրը մեկ այլ ավելի ծավալուն հոդվածի նյութ է:

Կառավարում

Այս ոլորտում քաղաքականությունն իրականացնում է գյուղատնտեսության նախարարությունը: 239 աշխատող ունի այս հսկան. նախարարի վեց տեղակալ, 19 վարչություն, 6 տեսչություն եւ այլն: Թեեւ նախարար Վլադիմիր Մովսիսյանը գտնում է՝ «որքան մեծ է աշխատակազմը, այնքան վատ է աշխատում», իսկ փոխնախարար Իշխան Մարտիրոսյանը, որին վեց տարի առաջ են հրավիրել Ֆրանսիայից, ասում է, որ ինքը 20 հոգանոց ապարատ կդահեր, բայց, չգիտես ինչու, կրճատումներ եւ կառուցվածքային փոփոխություններ

ԱԶԳ

Միջազգային

Բնականոնացման միտում Թեհրան-Անկարա փոխհարաբերություններում

Սեպտեմբերի 22-ին Թուրքիայի եւ Իրանի արտգործնախարարներ Իսմայիլ Ջեմը եւ Քամալ Խարազին, որոնք ՄԱԿ-ի գլխավոր նստաշրջանի 52-րդ նիստին մասնակցելու նպատակով Նյու Յորքում էին գտնվում, հանդիպեցին եւ քննարկեցին երկու երկրների փոխհարաբերությունների ընդլայնման եւ ամրապնդման հարցերը, որոնք 1997 թ. փետրվարի 2-րդ կեսից լարված բնույթ են կրում: Կողմերը համաձայնության եկան դիվանագիտական փոխհարաբերությունները կրկին բարձրացնել դեսպանի մակարդակի, ինչպես նաեւ ստեղծել տնտեսական եւ քաղաքական փոխհարաբերությունների զարգացման համատեղ կոմիտեներ: Հանդիպման համատեղ կոմիտեներ: Հանդիպումից հետո Թուրքիայի արտգործնախարարը հայտարարել է, որ երկու երկրների դեսպանները յոթամսյա ընդմիջումից հետո, հոկտեմբերին կվերադառնան իրենց ծառայության վայրերը՝ Թեհրան եւ Անկարա:

Թուրք-իրանական փոխհարաբերություններն Իրանի հեղափոխությունից հետո ընթացել են զգալի ելեւէջներով: Սակայն Թուրքիայի իսլամամետ վարչապետ Նեջմեթթին Էրբաքանի իշխանության օրոք թվում էր, թե երկու երկրների փոխհարաբերություններն աստիճանաբար ընդլայնվում եւ ամրապնդվում են: 1996 թ. օգոստոսին երկու երկրների միջեւ կնքվեց Թուրքիա գազ արտահանելու 23 մլրդ դոլար արժողությամբ պայմանագիր, ինչին Անկարան ձգտում էր տասնյակ տարիներ: Իսկ դեկտեմբերին պաշտոնական այցով Թուրքիա ժամանեց Իրանի նախագահ Ալի Ակբար Ռաֆսանջանին: Էրբաքանը ջանքեր էր գործադրում Թուրքիայի փոխհարաբերությունները բարելավել ու ամրապնդել իսլամական աշխարհի հետ: բերեց այստեղ առաջնորդի դեր ստանձնելու ակնկալիքով: Ինչը, բնականաբար, չէր հաստատում նաեւ Թուրքիայի աշխարհիկ ուժերի շահերին: Սակայն երբ ռամադանի ընթացքում (1997 թ. հունվարի 10-ից փետրվարի 10-ը) Էրբաքանը փորձեց երկրի ներքին կյանքում եւս որոշ փոփոխություններ կատարել իսլամական օրենքները տարածելու ուղղությամբ, ափերից դուրս բերեց ոչ միայն այդ երկրում աշխարհիկ վարչակարգի պահապանը համարվող բանակի գեներալներին, այլեւ ընդդիմադիր բոլոր ուժերին եւ նույնիսկ երկրի նախագահ Սուլեյման Դեմիրելին, որն իսլամականների դեմ պայքարի գործը հանձնարարեց գեներալներին: Թուրքիայում ստեղծված ներքաղաքական լարված նման իրավիճակում փետրվարի 3-ին, Երուսաղեմի փրկության օրվա առթիվ, Անկարայի արվարձան Սինքանի քաղաքապետի քանիերով կազմակերպվել էր միջոցառում, որի հրավիրյալների թվում էր նաեւ Անկարայում Իրանի դեսպան Մոհամմեդ Ռեզա Բաղերին: Վերջինս իր ելույթին տալով քաղաքական երանգ, ինչը անհարիր էր դիվանագետի գործունեությանը, ինչպես նաեւ անհամապատասխան պաշտոնական Թեհրանի հավատարակիր քաղաքականությանը, Թուրքիայում շարիաթի օրենքների կիրառման կոչ արեց: Իրանի դեսպանի ելույթը ոմանք պայթյունի հակազդեցություն առաջացրեց էրբաքանի քաղաքականի հակառակորդների շրջանում, մասնավորապես բանակի հրամակազմում: Փաստորեն, դեսպան Բաղերիի անշրջահայաց այդ քայլը պատճառ դարձավ, որ Թուրքիայի ներքաղաքական ճգնաժամը տարածվի նաեւ թուրք-իրանական փոխհարաբերությունների ոլորտ: Այնպես որ, դեսպան Բաղերին եւ Իրանը դարձան Թուրքիայի բանակի գեներալների ու կառավարության ընդդիմադիր ուժերի սուր քննադատությունների եւ ամբաստանությունների թիրախը: Այժմյան վարչապետ Մեսուտ Յըլմազը նշեց, որ Բաղերին ոչ թե դիվանագետ է, այլ ահաբեկիչ: Իսկ Թուրքիայի բանակի գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ Չեւիք Բիրը Իրանին համարեց ահաբեկչությունը հովանավորող երկիր: Եվ բանակի ու ընդդիմադիր ուժերի պահանջով էրբաքանի կառավարությունը հարկադրված փետրվարի կեսերին երկրից վտարեց դեսպան Բաղերիին եւ Սամբուլում Իրանի հյուպատոսին: Մարտի 1-ին Իրանի կառավարությունը, դիմելով պատասխան քայլի, Թեհրանում մեր տուկա հանդիսանալ: Եվ ի վերջո, ինչպես հայտնի է, ECO-ի զարգացմամբ բերեւս ամենաահագրգիռն Իրանն է, որի հիմնական անդամներից էր Թուրքիան: Իրանի զուտ կեցվածքը, բերեւս, հենց հիշյալ հանգամանքներով է պայմանավորված: Այս համատեքստով պետք է մեկնաբանել երկու երկրների փոխհարաբերություններում լարվածության, Իսրայել-Թուրքիա ռազմական համագործակցության եւ Հյուսիսային Իրաքում վերջինիս քաղաքականության հարցերի շուրջ լուրջ տարաձայնությունների առկայությամբ: Իրանի նախկին նախագահ Ռաֆսանջանիի 1997 թ. հունիսի 14-15-ը Սամբուլում կայացած իսլամական 8 խոշոր երկրների գագաթաժողովին մասնակցելը: Այն դեպքում, երբ եզիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը ի նշան թուրք-իսրայելական ռազմական դաշինքի նկատմամբ բողոքի հրաժարվեց Թուրքիա մեկնելուց: Այժմ թվում է, թե Թեհրանն ու Անկարան երկուսն էլ ձգտում են վերականգնել փոխհարաբերությունների նախկին մակարդակը: Սեպտեմբերի սկզբին Թուրքիայի փոխարտգործնախարարը որոշեց նախագահ Դեմիրելի հատուկ ներկայացուցիչ, Թեհրան ժամանեց Իրանի նախագահ Խաթամիին հանձնելու Թուրքիայի նախագահի ուղերձը, որում ցանկություն էր հայտնվել երկու երկրների փոխհարաբերությունները բարելավել, ընդգծելով, որ դա անհրաժեշտ է շրջանում խաղաղություն ու անդորր ապահովելու համար:

Թեեւ կարծես թե Իրան-Թուրքիա փոխհարաբերություններում ստեղծված ճգնաժամը հեռանում է, անգամ կողմերը չեն ցանկանում անդրադառնալ դրան, սակայն առկա տարաձայնությունները մշտապես իրենց բացասական հետեւանքն են թողնելու այդ փոխհարաբերությունների վրա, եւ դրանք նախկինի պես ընթանալու են զգալի տատանումներով: Երբ դեռ նախագահ Դեմիրելի ներկայացուցիչը գտնվում էր Թեհրանում, «Իրանի Իսլամական Հանրապետության ձայն» ռադիոկայանը նոյեմբերին կայանալիք ԱՄՆ-Իսրայել-Թուրքիա համատեղ ծովային ուժերի զորավարժությանը նվիրված մեկնաբանությամբ խստիվ քննադատության ենթարկեց Թուրքիային: «Իրան Նյուս» օրաթերթը նույն ընթացքում (սեպտեմբերի 7-ին) տեսել է, որ երկու երկրների միջեւ ընդհանրությունները գերազանցում են տարաձայնություններին: ուստի անհրաժեշտ է, որ դեսպանները

ԱՐՏԱՔԻՆ

Թուրքիա. Բանակի հրամանատարությունն ընդդեմ Չիլլերի

Թուրքիայի բանակի հրամանատարությունը օրերս պետական անվտանգության դատարանին է ներկայացրել նախկին վարչապետ եւ «Ճշմարիտ ուղի» կուսակցության ղեկավար Թանսու Չիլլերի դեմ պաշտոնական ամբաստանություն: Հետեւելով վերջինիս կողմից բանակի վարկաբեկման փաստը: Մեսուտ Յըլմազի կառավարությունը բանակի վերահսկողության տակ գտնվելու մասին Սամսունում կատարած իր հայտարարության հետեւանքով Չիլլերը կարող է բանտարկվել 6 տարի ժամկետով: Խորհրդարանը նախ պետք է վերացնի նախկին վարչապետի անձեռնմխելիությունը:

Չենքի միջազգային մասնակցությունը անհանգստացնում է

Օրերս Լուբլյանայում ավարտվել է ՄԱԿ-ի հովանու ներքո կայացած խորհրդակցական ոչ պաշտոնական հանդիպումը, որտեղ ԱՄՆ-ի, Բրիտանիայի, Հայաստանի, Ադրբեջանի, Կանադայի, Խորվաթիայի, Չեխիայի, Ֆրանսիայի եւ այլ երկրների ներկայացուցիչները քննարկել են գենի միջազգային մասնակցության դեմ պայքարելու միջոցառումները: Առաջարկվել է խստացնել օրինախախտների պատիժները եւ ակտիվացնել աղբոտման գեներ գրավելու ու դրանց փոխադրությունն արգելելու աշխատանքները: «ՈՍՅԵՐ»-«ԵՐԵՎԱՆ»

Կոլումբիայի եւ Ռուսաստանի մաֆիաները համագործակցում են

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, RFI: Ամերիկյան «Վաշինգտոն փոստ» թերթի այսօրվա համարում նյութեր են տպագրված ռուսական մաֆիայի հետ կոլումբիական թմրաբիզնեսի կապերի մասին: Ռուսաստանյան թմրագործներն օգնում են կոլումբիական թմրանյութերը հասցնել եվրոպա: Իր հերթին, կոլումբիական մաֆիան հույս ունի, համենայնդեպս փորձում է, Ռուսաստանի հանցաշխարհի օգնությամբ «երկիր-օդ» տեսակի հրթիռներ եւ ռուսաստանյան արտադրության ռադիոթիռներ գնել: Ամերիկյան թերթի հաղորդագրությունները հիմնվում են կոլումբիական մաֆիա ներմուծված եւ այնտեղ աշխատած ամերիկյան գործակալից ստացված տվյալների վրա:

ԱՄՆ-ի կարծիքը տարբերվում է իսրայելցիների կարծիքից

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, RFI: Իսրայելական «Մաարիվ» թերթը հասարակական կարծիքի հարցում անցկացրեց ամերիկյան հրեաների շրջանում: Պարզվեց, որ մեծամասնությունն աջակցում է պաղեստինյան պետություն ստեղծելու ծրագրին՝ պայմանով, որ Երուսաղեմը մնա Իսրայելի մայրաքաղաք: Հարցվածների երեք հոգուց հետո համարում է, որ ԱՄՆ-ը պետք է ճնշում գործադրի Նաթանյահուի կառավարության վրա: 79 տոկոսը հանդես է եկել ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթի դիրքորոշմանը՝ ջնջվածքներում նոր բնակավայրերի շինարարության հարցի կապակցությամբ:

Նորվեգիան եւ իր սեւ ոսկին

Պարսից ծոցի նավթային տերություններից հազարավոր կիլոմետրեր հեռու, Հյուսիսային ծովի մոտ գտնվում է մեկ ուրիշ նավթային միապետություն, որի մասին համեմատաբար քիչ է խոսվում: Դա Նորվեգիան է, որն ունի ընդամենը 4.4 միլիոն բնակիչ: բայց նավթի արդյունահանման շնորհիվ վերջին տարիներին հարստանում է աշխարհի ամենահարուստ երկիրը: Նավթի արդյունահանման գծով Նորվեգիան աշխարհում զբաղեցնում է 8-րդ տեղը, իսկ արտահանության գծով 2-րդն է (տարեկան 150 մլն տոննա՝ գիշերով միայն Սաուդյան Արաբիային (375 մլն տոննա): Բնական գազի արդյունահանման գծով Նորվեգիան աշխարհում զբաղեցնում է 8-րդ տեղը, արտահանման գծով 5-րդ տեղը: Այս տարի միայն նավթի արտահանումից երկիրը կստանա 167 մլրդ կրոն (մոտ 23 մլրդ դոլար), ասում է «Էքսպրես» հանդեսը:

Նման վիթխարի եկամուտների դեպքում դժվար է դատողանել սառնասրտությունը: Այդուհանդերձ Օսլոյում շահագանց զգուշավոր գիտ են բռնում: Նորվեգիայի կառավարությունը գտնում է, որ շահագանց մեծ ծախսերը կստեղծեին տնտեսական լարվածություն, կհարուցեին սղաճ, ձեռնարկությունների մրցունակության անկում եւ գործազրկության աճ: Ներկայումս գործազրկության մակարդակը 4 տոկոս է: Ավելին, զայիթ սերունդները կարող են զրկվել բարեկեցիկ կյանքից, եթե Հյուսիսային ծովի նավթից ու գազից ստացվող խոշոր եկամուտները անմիտաս կերպով շռայլվեն: Ուստի արդեն այժմ կառավարությունն այդ գումարներ ներդնում է արտասահմանում գտնվող հատուկ հիմնադրամի մեջ:

Յուրաքանչյուր նախարարություն նավթային եկամուտների ներդրման գործը տնօրինում է Մարտին Սկանկեն: Արդեն երկու տարի գոյություն ունեցող «Նավթային հիմնադրամը» արդեն դարձնելու է մոտ 15 մլրդ դոլար եւ առաջիկա 4 տարում հասարակելու է Նախարարության մոտավոր հաշվարկների համաձայն 2020 թվականին հիմնադրամի գումարը կհասնի իր բարձրակետին: Մինչեւ վերջերս այդ փողերը ներդրվում էին պետական վիճակագրությունների մեջ՝ բայց եկող տարվանից հիմնադրամի 30-50 տոկոսը բաժնետոմսերի ձեւով վաճառքի կհանվի աշխարհի ամենահարուստ բաժնետոմսերում:

Նորվեգիայի ֆինանսների նախարարությունը այդ նպատակով ներկայացրել է առնում երեք տարբեր ֆինանսական կառավարիչների հանձնարարման հարց: Մարտին Սկանկեն բացատրում է, որ բացառվում է օտարերկրյա ընկերությունների գործունեությանը ազգավարական մասնակցություն ունենալը: որպեսզի բացառվեն կասկածելի եւ վնասաբեր գործարքներ: Օսլոն ձգտում է նվազագույնի հասցնել ռիսկի գործոնը եւ ներդրումներ կատարել բազմաոլորտ ձեւերով:

Նորվեգացիներից շատերը համակրություն չեն տածում այս զգուշավոր հաղարարությանը: Իմանալով հանդերձ, որ այսօրվա գանձերը վաղը ծառայելու են իրենց թոռների թոռակավորմանը: Այսօր մանկամտորների եւ հիվանդանոցների առջեւ հերթեր են գոյանում: զառամյալ մարդիկ ոտիպված են լինում իրենց սենյակները կիսել ծերանոցներում: Բժիշկների ու բուժքույրերի պակաս է զգացվում: Աշխատանքների թիվն անցել է 6200-ից:

Բազմաթիվ նորվեգացիներ այսօր որեւէ ձեւով չեն զգում նավթային միլիարդների բարերար ազդեցությունը: «Երանի ճանճ բացել եմ լսելով, թե մենք աշխարհի ամենահարուստ երկիրն ենք հանի որ չեմ կարողանում դրանից օգտվել», հայտարարում է առաջադիմության կուսակցության ղեկավար Կարլ Իվար Հագենը: Սեպտեմբերի 15-ին կայացած օրենսդրական ընտրություններում այս դրդդրիս բեկնածուի կուսակցությունը ստացավ ելիների 15.3 տոկոսը: խուճապի մատնելով կառավարող աշխատավորական կուսակցությանը: Հաղթանի ամբոխավարական ելույթներ ներկայումս մեծ հաջողություն ունեն Նորվեգիայի «ամեհված» բնակչության շրջանում: Ի դեպ, Հաղթանի գաղափարները երբեմն համահունչ են Ֆրանսիայի ծայրահեղ աջ ազգային ճակատի ղեկավար Ժան Մարի Լը Պենի գաղափարներին: Սառնասրտորեն ներքաղաքի սահմանափակման հարցում:

Պ. Ա.



ՏԱՐԱՌՈՍ

Կոլումբիայի եւ Ռուսաստանի մաֆիաները համագործակցում են

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, RFI: Ամերիկյան «Վաշինգտոն փոստ» թերթի այսօրվա համարում նյութեր են տպագրված ռուսական մաֆիայի հետ կոլումբիական թմրաբիզնեսի կապերի մասին: Ռուսաստանյան թմրագործներն օգնում են կոլումբիական թմրանյութերը հասցնել եվրոպա: Իր հերթին, կոլումբիական մաֆիան հույս ունի, համենայնդեպս փորձում է, Ռուսաստանի հանցաշխարհի օգնությամբ «երկիր-օդ» տեսակի հրթիռներ եւ ռուսաստանյան արտադրության ռադիոթիռներ գնել: Ամերիկյան թերթի հաղորդագրությունները հիմնվում են կոլումբիական մաֆիա ներմուծված եւ այնտեղ աշխատած ամերիկյան գործակալից ստացված տվյալների վրա:

ԱՄՆ-ի կարծիքը տարբերվում է իսրայելցիների կարծիքից

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, RFI: Իսրայելական «Մաարիվ» թերթը հասարակական կարծիքի հարցում անցկացրեց ամերիկյան հրեաների շրջանում: Պարզվեց, որ մեծամասնությունն աջակցում է պաղեստինյան պետություն ստեղծելու ծրագրին՝ պայմանով, որ Երուսաղեմը մնա Իսրայելի մայրաքաղաք: Հարցվածների երեք հոգուց հետո համարում է, որ ԱՄՆ-ը պետք է ճնշում գործադրի Նաթանյահուի կառավարության վրա: 79 տոկոսը հանդես է եկել ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթի դիրքորոշմանը՝ ջնջվածքներում նոր բնակավայրերի շինարարության հարցի կապակցությամբ:

ԱԶԳ

Մշակույթ

Մեծ Մանուկ աղան

Յոլակ Ամերիկյանի ծննդյան 110-ամյակին

Ծնվել էր Տրապիզոնում, մկրտվել Գալուստ անունով, կրել տոհմական մականունը՝ Սուլուլիկյան: Գալուստ Սուլուլիկյան անուն-ազգանունը այսօրվա թատրասերներին ոչինչ չի հուշում: Դեռևս բեմական արշալույսին զգաց իր անուն-ազգանունի անբարեհնչունությունը, ոչ «թատրական» լինելը ու սեփական նախաձեռնությամբ երկրորդ անգամ մկրտվեց՝ կրելով Յոլակ Ամերիկյան հնչեղ անուն-ազգանունը, որով եւ հայենի դարձավ թատրասեր հասարակայնությանը, այսպես էլ գրանցվեց հայ թատրարվեստի տարեգրության մեջ: Այսօր, երբ հոլովում ենք Յոլակ Ամերիկյան անուն-ազգանունը, հառնում է հայ դերասանական գեղդասանի երեւելի անհատականություններից մեկը՝ հաղթահասակ, գեղանձն արհիստը ստեղծագործական իր ընդգծված անհատականությամբ, անփոթ նկարագրով:

Պոնտական ծովի խողովահույզ ալիքների շառաչը մեկ անգամ չէ, որ հասել էր Բոսֆորի հայության ականջին իբրեւ վերահաս աղետների ահազանգ-նախազգուշացում, նախնիներ, որ որոնց արյունոտ սուլթան Համիդը եւ իրականացրեց 1894-96 թթ. հայոց զանգվածային կոտորածները, երբ Յոլակ Ամերիկյանը 7-8 տարեկան երեխա էր:

Ցեղային բնազդի ընորհիվ, թե փրկարար մի հեռատեսությամբ, Սուլուլիկյան գեղդասանի նահապետը Ամերիկյանի հորեղբայրը ընտանիքով հեռանում է ծննդավայր քաղաքից եւ բնակություն հաստատում Բաթումում: Ծովափնյա այս քաղաքում է անցել ապագա դերասանի պատանեկությունը, քաղաք, ուր հայկական ու ռուսական թատրախմբերը հաճախակի էին այցելում հյուրախաղերով: Ու թեեւ թատրոնը հրապուրում էր պատանուն, բայց ընտանիքի սախապաշարված նահապետը համոզված էր, որ իր եղբոր որդին, Սուլուլիկյան ընտանիքի միակ արու զավակը կդառնա աշխարհիկ մեղքերից հեռու, արբակենցաղ, խելամիտ մի հոգեւորական: Այս նպատակով Գալուստին ուղարկում է Վենետիկ, Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանների վանքը սովորելու: Սակայն երիտասարդը վանական դառնալու համար չէր ծնվել: Եվ մի գիշեր Գալուստը գաղտագողի հեռանում է վանքից ու միաժամանակ արկածային կյանք վարելուց հետո 1906-ին կրկին դառնում է ընտանիքի գիրկը՝ Բաթում:

Հարազատներից գաղտնի բարձրանում է բեմ՝ ողբերգակ Կարապետ Գալֆայան Համլետի կողքին կատարելով առաջին դերասանի դերը, իսկ հիշ անց Արմեն Արմենյանի Ֆրանցի հարեւանությամբ խաղում է Շուֆբերլեի դերը:

Բեմը գաղտնապահ չէ: Շուտով հորեղբորը հայտնի է դառնում Գալուստի «օյինջությունը», եւ խստագույնս հանդիմանում: «... Օ՛ն, մանչս, ինձի նայե, ըլլաս, ըլլաս Ադամյան չոփիր ըլլաս, խեղճը անոթութենեն մեռավ», եւ առաջարկում է դառնալ իր պատկառելի հարստության տնօրենը: Երկընտրանքի՝ ընդունե՞լ հորեղբոր գայթակղիչ առաջարկը, ապրել անկարիճ, վայելչների մեջ, թե՞ բռնել դերասանի տասանոց ճամփան հաղթում է թատրոնի սերը, եւ անբաժին հորեղբոր ունեցվածքից մեկնում է Եվրոպա, պատահական սեւ աշխատանքով հայթայթելու հացը եւ հաճախում թատրոններ, դիտում ժամանակի հռչակավոր դերասանների՝ Սառա Բեռնարի, Ռեժանի, Կոկլեն եղբայրների եւ այլոց խաղը: 1909-ին կարճատեւ շրջագայությունից հետո դառնում է Թիֆլիս՝ իր բախտը կապում Ամո Խարազյանի թատրախմբի հետ: Շուտով հեռանում է Խարազյանի թատրախմբից, կազմում իր թատրախումբը եւ շրջում Արեւմտյան Հայաստանի եւ Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերը, խմբի ղեկավարի ու առաջին դերասանի պարտականությամբ:

1930-ի թատրաշրջանում աշխատում է Բաքվի հայկական թատրոնում, իսկ հաջորդ տարին Վարդան Ադեմյանի հրավերով տեղափոխվում է Գյումրիի թատրոն, ուր եւ ստեղծագործեց մինչեւ իր օրերի մայրամուտը:

Փառահեղ արտաքին ուներ Յոլակ Ամերիկյանը՝ երգեհոնի դողանջ հիշեցնող զորեղ ձայն, հուզառաս ներքին: Ամերիկյանը մասնագիտական կրթություն չէր ստացել: Այդ պակասը հատուցում էր դերասանի ստեղծագործական, գրեթե անսխալ բնազդը: Իր ավելի քան կեսդարյա բեմական կյանքում Ամերիկյանը խաղացել է 250 դեր, ինչպես ազգային, այնպես էլ եվրոպական ու ռուսական դրամատուրգիայում՝ խաղացել է Հ. Պարոնյանի, Ալ. Շիրվանզադեի բոլոր նշանավոր կերպարները՝ Պաղտասար աղբար, Էլիզբարով, Գիժ Դանիել եւ այլն: Այս կարգի դերակատարումներից ամենափայլունը Շոպլենկոն էր Շիրվանզադեի «Մորգանի խնամին» սատիրայում: Ս. Ամերիկյանի հիշարժան կերպարներից էին Վրթ. Փափազյանի Եգոր Մասվեիչը («Ժայռ»), Վ. Վաղարշյանի Ասլան ամին («Օղակում»), Մուրացանի Սահակ Սեւադան («Գեւորգ Մարզպետունի»), իսկ Մկրտիչ Զանանի Շահ Զեիրը (Շահնամե»), բարձրարվեստ մի կերպար էր, կատարյալ խաղացումը բոլոր ժամանակների բոնակալների:

Երկայն է շարանը ռուսական ու եվրոպական դրամատուրգիայից Ամերիկյանի անծնավորած դերերի՝ Շիլերի Վուրմը («Սեր եւ խարդավանք»), Սուխովո-Կոբիլինի Մուրոմսկին («Կրելինսկու հարսանիքը»), Վ. Իվանովի Վերշինինը («Զրահագնացք 14-69»), Շեքսպիրի Մալվոլիոն («12-րդ գիշեր») եւ այլն: Այս շարքի բարձրակետը եղավ Կ. Գոլդոնիի Կավալերը («Հյուրանոցի տիրուհին»), որով Ամերիկյանը հասավ բացարձակ արվեստի սահմանագծին: Մեծ էր Ամերիկյան դերասանի հմայքը, այնքան մեծ, որ նույնիսկ չհաջողված դերերն էլ գոհունակությամբ էին ընդունում անգամ բծախնդիր թատրագետները:

Ամեն դերասան իր հնարավորությունների սահմաններում ունենում է իր ստեղծագործության բարձրակետը: Դրանք երկուսն էին՝ Մ. Գորկու Սատինը («Հատակում») եւ Հ. Պարոնյանի Մանուկ աղան («Մեծապատիվ մուրացկաններ»): Մարդկային բեւեռացված բնավորություններ, խորունկ դրամատիզմից մինչեւ բարձր կատակերգականը: Մի մեծ գեղագիտական բավականություն էր տեսնել Ամերիկյանի Սատինը, ցնցոտիների մեջ պարուրված այդ գեղանձն մարդուն, լսել նրա ախորժալուր, հուժկու բասը, փոքր-ինչ պաթետիկ խոսքը, զգալ նրա հերոսի հոգեկան տվայտանքները, մի կոթողային կերպար, որն ընկալվում էր իբրեւ բողոքի հուժկու ճիչ անարդար աշխարհի դեմ:

Արտիստական իր խառնվածքով Ս. Ամերիկյանը խոր դրամատիկական-ճչի դերասան էր, եւ սակայն իր ստեղծագործության թագն ու պսակը դարձավ Մանուկ աղան հակառակ բեւեռում, կատակերգական ժանրում: Հ. Պարոնյանի Մանուկ աղան մնաց չգերազանցված հայ բեմում: Դա այն բացառիկ կերպարն էր, որը դարձավ բացարձակ արվեստի թագավորության բնակիչը: Վ. Ադեմյանի «Մեծապատիվ մուրացկանները», այդ թատրական հրավառությունը խարսխված էր հիանալի եռյակի՝ Աբիսողոմ-Զոհրաբյանի, Մանուկ աղա-Ամերիկյանի եւ Շողակաթ-Ասլանի ուսերին: Ամերիկյան Մանուկ աղան դերասանական արվեստի այն անըստգյուտ ստեղծագործություններից էր, որ հիմք տվեց Վահրամ Փափազյանին գրելու. «Յոլակը մնայուն ցոլ կմնա հայ թատրոնի ճակատին իր անկրկնելի Մանուկ աղայով, հազվադեպ մի անձնավորում, որը միայնակ իրավունք է տալիս նրան բազմելու հայ բեմի վարպետների առաջին շարքում»:

Մեր կինոգործիչներն անուշադիր եղան նրա հանդեպ, չնկարահանեցին նրան: Եվ երբ իջել էր բեմից, նոր միայն սկսնակ կինոռեժիսոր Արման Մանարյանը տեսավ նրան եւ «Տժվժիկ» կարճամետրաժ ֆիլմում նրան նկարահանեց Թորոս աղայի դերում՝ Հրաչյա Ներսիսյան, Յոլակ Ամերիկյան, Արման Կոթիկյան-ահա այն հրաշալի եռյակը, որով պայմանավորված էր ֆիլմի բացառիկ հաջողությունը: Ամերիկյանի արվեստից մի բեկոր մնաց ժապավենի վրա՝ այլեւս անկորնչելի:

Երեք ու կես տասնամյակ է անցել Ս. Ամերիկյանի վախճանից: Կարծես հիմա էլ տեսնում ենք նրան պարբերահասակ արտիստին, լայնեզր գլխարկն անվարս գլխին, թեթեւակի հենված ձեռնածողին, մուգ շագանակագույն եղջերավոր ակնոցի տակից կկոցած հայացքը հառած անորոշ հեռուներին: Արդյոք ինչպիսի՞ գեղեցկություններ տեսավ նա, որ այդպես էլ չհաստատեց ներկայացնել իր հանդիսատեսին...

ԳԵՎՈՐԳ ԱԲԱՋՅԱՆ

Աստվածաշունչը, կուսությունը եւ ոռմնոռը

ԱՄՆ-ում քրիստոնեական ոռոի նշանակոր երեւույթ է դարձել

70 հազար հոգի տեղավորվել են հարթավայրում հատուկ հարմարեցված բացօթյա ամֆիթատրոնում: Բեմի ներքեւում մեծ դասատի վրա գրված է «Շնորհակալություն մեր Արարչին»: Հանկարծ ծխի եւ բարձր երաժշտության տակ բեմ է դուրս թռչում մի երիտասարդ աղջիկ եւ ձեռքերը վեր բարձրացնելով՝ բղավում. «Աստված մեր մեջ է, միայն նա է բացարձակ էակը...»: Ռեբեկա Սեն-Ջեյմսը 20 տարեկան է: Նա քրիստոնեական ոռոի գերասդերից է: Իր ասելով նա միայն մի առաքելություն ունի՝ Ավետարանի քարոզչությունը երիտասարդների մեջ: Մի ձեռին շրթնարմոն, մյուսում՝ Աստվածաշունչ, նա իր երկրպագուներին կոչ է անում արտասամուսնական կապերի մեջ չմտնել:

10 տարվա ընթացքում քրիստոնեական ոռոի շահույթը բազմաթատկվել է 7 անգամ: Եզակի հաջողություն է գրանցվել դիսկերի թողարկման բնագավառում, ուր կենտրոնացել են միջազգային հայտնի ֆիրմաները: Այս տարի Փենսիլվանիայում կայացած քրիստոնեական Վուդստոկին մասնակցում էր 45 ռոք-խումբ: Աստղ հնչում է ամեն տեսակի երաժշտություն՝ ռոք, ռեփ, հիփ-հոփ, ֆանկ, տեխնո...

Երգիչները երգում են իսկական սիրո, զոհողության, գթության եւ ապաշխարանքի մասին: Իր կարիերայի սկզբում Մայքլ Վ. Սմիթը (քրիստոնեական ռոքի էլթոն Ջոնի), զբաղվում էր թմրամոլությամբ, մինչեւ որ «Աստված լրացրեց իմ միջի դատարկությունը: Քրիստոնյա լինել ըստ ռոկերների նշանակում է պահպանել ամուսնական հավատարմությունը, չզբաղվել թմրամոլությամբ, չխմել, չծխել... Սակայն լինում են նաեւ սայթաքումներ: Աստղերից մեկը կաղ հաստատեց մի ամուսնացած երգչուհու հետ:

Քրիստոնեական գերասդերի ծանաչումը մեծ է նաեւ ոչ քրիստոնյաների շրջանակներում: Այսպես, Բոբ Կոլֆելը գրավել է ամերիկյան հիթ-շարքերի առաջին տեղը:

«ԼՔՊՐԵՍ»

ՀԱՄԱՌՈՏ

«Փարաջանով» ցուցահանդեսը կներկայացվի Թուլուզում

ԵՐԵՎԱՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆրանսիայի Թուլուզ քաղաքում 1999 թվականի սկզբին կազմակերպվելու է Սերգեյ Փարաջանովին նվիրված ցուցահանդես, ինչպես նաեւ նրա ֆիլմերի ցուցադրություն: Արդեն ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Թուլուզի ժամանակակից արվեստի թանգարանում կներկայացվի ռեժիսորի Երեւանում զտնվող տուն-թանգարանից տարված ցուցադրանյութը: Միաժամանակ ֆրանսիացի հանդիսատեսը մեկ անգամ եւս կդիտի Փարաջանով կինոռեժիսորի ստեղծագործությունները: Այս ծրագրի հեղինակ, ֆրանսահայ կինոռեժիսոր Սերժ Ավետիկյանն ասաց, որ ցուցահանդեսին ու ֆիլմերի ցուցադրությանը հաջորդելու է Փարաջանովին նվիրված գրքի հրատարակությունը: Այն ամփոփելու է ռեժիսորի պլաստիկ գործերի, կոլաժների, ֆիլմերի համար արված նկարների ուսումնասիրությունը, որը կներկայացնեն ֆրանսիացի հայտնի մասնագետները:

Չարենցավանի 50-ամյակին նվիրված հուշահամալիրի բացումը՝ շուտով

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ավարտվեցին Չարենցավանի 50-ամյակին նվիրված հուշահամալիրի շինարարական աշխատանքները: Հուշահամալիրի ընդհանուր մակերեսը 600 քառ. մետր է: Նրա կենտրոնում տեղադրված է ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի քարտեզների մակետը: Սեւանը ներկայացված է որպես փոքր ավազան մակետի կենտրոնում: Համալիրի մեջ է մտնում 6 մետրանոց բազալտե հուշարձանը՝ աղբյուր-խաչքարով: Հինգ ցայտաղբյուրները խորհրդանշում են քաղաքի 50-ամյա հոբելյանը: 25 մետրանոց պատի վրա մոտ ժամանակներս կփորագրվեն դրվագներ հայ ժողովրդի պատմությունից: Հուշահամալիրի նախագծի հեղինակներն են ճարտարապետներ Աշոտ Մելիքյանը, Արմեն Աղայանցը եւ Արթուր Ղուլյանը: Հանդիսավոր բացումը նախատեսված է հոկտեմբերի կեսերին՝ Չարենցավանի 50-ամյակի համաշխարհային տոնակատարության ժամանակ:

«Քույր Աբգարյաններ եւ սաներ» ցուցահանդեսը Երեւանում

Ժողովրդական արվեստի պետական թանգարանում սեպտեմբերի 16-27-ը բացվել էր «Քույր Աբգարյաններ եւ սաներ» ցուցահանդեսը, ուր ներկայացված էին Անահիտ Աբգարյանի (նա գեղարվեստի համար 14 ու սումնարանում ծեռագործ է դասավանդում) եւ նրա սաների, ինչպես նաեւ Անժելա Աբգարյանի աշխատանքները: Քույրերի աշխատանքները բազմիցս ներկայացվել են զանազան ցուցահանդեսներում՝ ոչ միայն մեզ մոտ, այլեւ դրսում (Գերմանիա, Ֆրանսիա): Սա նրանց առաջին անհատականն է: Նրանք պատրաստվում են նոր ընտանեկան ցուցահանդեսի, քանի որ նրանց ընտանիքի բոլոր անդամները դեկորատիվ-կիրառական արվեստի տարբեր ճյուղերի վարպետներ են (մայրը գորգագործ է):

Ցուցահանդեսում ներկայացված էր երկու գորգ, որոնք կրկնօրինակներ էին: Առաջինը «Լոռի» գորգն էր, մյուսը «Բայազետը»: Սրանք ծաղկային գորգեր էին, որոնցից երկրորդի մեջտեղում ծաղիկներից խաչ է հյուսված:

«Բայազետ» գորգը այժմ հիշ են գործում, որովհետեւ աշխատատար է նախշերը եւ գույները խիտ են եւ շատ: Իմիջիայլոց, այս երկու գորգերը աղջիկները գործել էին լամպի լույսի տակ:

Ընդհանրապես ժամանակակից կիրառական արվեստի վարպետները հաճախ են տարբեր ճյուղերը համատեղում: Այսպես, ներկայացված ամանեղենի սրբիչները ընդգրկում էին մաքրության, կարպետագործության, ասեղնագործության տարրեր (Այնքարի տեխնիկան): Սփռոցների էսքիզների մեջ կային մանրանկարչության տարրեր, օգտագործված էր տարբեր կարատեսակների տեխնիկա (Այնքարի, Մարաշի եւ այլն):

Ցուցահանդեսում մեծ տեղ էին գրավում ժանյակները, որոնց տարրերը օգտագործված էին ասեղնագործ նկարներում եւ վարագույրներում: Իսկ ժանյակների մեջ թափանցել էր մանրանկարչությունը (թռչունով ժանյակ):

Փորիկ կարպետները, խաչկարով եւ գոբելենով բարձերը գորգի էսքիզներով, Ուրհայի ասեղնագործությունը, հելենագործ վարագույրները, ասեղնագործ մանրանկարները ստեղծում էին այն կոլորիտը, որն այնքան բնորոշ է ժողովրդական արվեստի թանգարանին: Թանգարան, որի ցուցանմուշները ապացույց են, թե ինչպես կարելի է արհեստը կատարելագործելով ստեղծել արվեստի նմուշներ:

Ա. Ա.

Հոկտեմբերյան հիշարժան օրացույց

Գեւորգ Դեւրիկյան (1.10.1937-5.9.1996)-գրող, հրապարակախոս, երգիծաբան, 60-ամյակը:
Երաժշտության միջազգային օրը (1.10)
«Երեկոյան Երեւան» թերթը (1.10.1957)-լույս ընծայման 40-ամյակը:
Արմենուհես (2.10.1922)-հիմնադրման 75-ամյակը:
Համբարձում Կարապետյան (2.10.1927)-պատմաբան, 70-ամյակը:
Առաջին արհեստական արբանյակը (4.10.1957)-40-ամյակը:
Յոլակ Ամերիկյան (5.10.1887-17.9.1964)-դերասան, 110-ամյակը:
Միգել Սերվանտես (9.10.1547-23.4.1616)-իսպանացի գրող, 450-ամյակը:
Ռուսական զորքերի կողմից Երեւանի ազատագրումը պարսիկներից (11.10.1827)-170-ամյակը:
Համազասպ Հարությունյան (14.10.1902-4.4.1971)-գիտնական, տնտեսագետ, դիվանագետ, 95-ամյակը:
Իլյա Իլֆ (15.10.1897-13.4.1937)-ռուս գրող, երգիծաբան, 100-ամյակը:
Գրիգոր Գուրզադյան (15.10.1922)-աստղաֆիզիկոս, 75-ամյակը:
Մինաս Բժշկյան (15.10.1777-26.1.1861)-պատմաբան, սազգագրագետ, բանաստեղծ, երաժշտագետ, մանկավարժ, 220-ամյակը:
Դավիթ Գասպարյան (17.10.1947)-գրականագետ, 50-ամյակը:
Ավետիք Իսահակյան (30.10.1875-17.10.1957)-գրող, մահվան 40-ամյակը:
Բաղիշ Հովսեփյան (18.10.1922)-գրող, 75-ամյակը:
Վլադիմիր Դալ (22.11.1801-4.10.1872)-ռուս լեզվաբան, մահվան 125-ամյակը:
Նվեր Սաֆարյան (23.10.1907-28.9.1982)-գինվորական գործիչ, 90-ամյակը:
Ռաֆայել Աթայան (30.10.1907-4.12.1990)-արձակագիր, գրականագետ, մանկավարժ, թարգմանիչ, 90-ամյակը:
Գաբրիել Երանյան (1827-13.10.1862)-կոմոլոգիստ, երաժշտական հասարակական գործիչ, 170-ամյակը:
Միավորված ազգերի կազմակերպության միջազգային օրը (24.10)

Հ. Հ.

ԱԶԳ

Մարզական

ՇԱԽՄԱՏ

Վերջնագծից առաջ



Պատանիների եւ աղջիկների աշխարհի առաջնություններում խաղացվեց եւս մեկ տուր ուքերորդը, որը ավելի սահմանազատեց մեդալների համար պայքարողներին եւ մյուսներին: Ուրախությամբ նշենք, որ չորս մրցաշարերից երեքում (բացառությամբ 18 տարեկան աղջիկների) մեր հանրապետության ներկայացուցիչները մեդալների իրական հնարավորություններ ունեն:

Ասածը վերաբերում է մասնավորապես, մինչեւ 16 տարեկան աղջիկների առաջնությանը մասնակցող Նարինե Գասպարյանին, Լիլիթ Մկրտչյանին եւ Նելլի Ադինյանին: Երեքն էլ վերջին տուրում հաղթանակներ տարան. Նարինեն՝ Դարյա Կապսի (Սլովենիա), Լիլիթը՝ Յանա Յակովայի (Չեխիա), Նելլին՝ Դանիելա Ֆանտինիի (Արգենտինա) նկատմամբ: Նրանք 6-ական միավոր ունեն եւ Կուբայի ներկայացուցիչ Սուլենիս Պինայի հետ միասին բաժանում են 2-5 տեղերը: Իսկ առաջատարը չինուհի Յուանյուան Քայուն է, որը մեկ միավոր ավելի է

վաստակել:

Չի ուրախացնում մինչեւ 18 տարեկան մեր աղջիկների եռյակը: Մեր շախմատիստուհիները մրցաշարային աղյուսակի ներքեւում են: Իսկ առաջատարը վրացուհի Ռուսուդան Գոլեթիանին է, որը վերջին տուրերում հիանալի խաղ է ցուցադրում: Նա ունի 7 միավոր: Կես միավորով է ետ մնում Թրանգ Տան Հոանգը (Վիետնամ):

Մինչեւ 16 տարեկան պատանիների առաջնությունում 7 միավորով միանձնյա առաջատարը ռումին Լեւենս Վայդան է, որը պարտության մատնեց Չաղրան Սագեհին (Հնդկաստան): Այստեղ վերջնական հաջողության լավ հնարավորություններ է պահպանում երեւանցի Լեւոն Արոնյանը: Ութերորդ տուրում նա երրորդ անընդմեջ հաղթանակը տարավ՝ ընդհուպ մոտենալով առաջատարին: Սեւերով ոանդիոնելով Իսրայելի ներկայացուցիչ Ալեքսանդր Կունդինի հետ Լեւոնը միջնախադրում գինվոր զոհաբերեց, գրոհ կազմակերպեց մրցակցի արքայի վրա եւ գեղեցիկ հաղթանակ տարավ:

Այժմ Արոնյանն ունի 6,5 միավոր եւ 9-րդ տուրում պետք է խաղա Վայդայի հետ: Այս մրցաշարի մեր մյուս մասնակիցներից արժե նշել նաեւ Տիգրան Քոթանջյանին: Նա կոմբինացիոն ոճով անցկացրեց հանդիպումը ուկրաինացի Եվգենի Կոբիլկինի հետ եւ խաղն իր օգտին ավարտեց մասային գրոհով:

Փոքր-ինչ նահանջեցին ավագ տարիքի մեր պատանիները: Կարեն Սարյանը վերջին երեք տուրերում ոչ-ոքիներ անելով իր մրցակիցների հետ, այժմ 6 միավորով 3-4-րդ տեղերն է բաժանում հույն Սթելիոս Հալկիասի հետ: Կարենը հենց վերջինիս հետ էր խաղում ութերորդ տուրում: Նա ամեն կերպ փորձում էր առավելության հասնել, դիմեց զոհաբերությունների, բայց հայտնվեց ծանր կացության մեջ: Սակայն, նրա մրցակիցը, որին մնացել էր մնացել ոչ-ոքի առաջարկեց, որը եւ ընդունվեց: Նույնքան արդյունք, նա կայն կարճատեւ խաղից հետո, գրանցվեց երեւանցի Արթուր Չիբուխչյանի պարտությամբ: Այժմ նա 5,5 միավորով առաջատարների երրորդ խմբում է:

Մինչեւ առաջնությունների ավարտը մնացել է երեք տուր:

Ռ. Ա.



ՀՀ նախագահն այցելեց շախմատի աշխարհի առաջնության մրցավայր

ԵՐԵՎԱՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սեպտեմբերի 30-ին ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն այցելեց Երեւանի «Մոսկվա» կինոթատրոն, որտեղ շարունակվում են մինչեւ 16 եւ 18 տարեկան տղաների եւ աղջիկների շախմատի աշխարհի առաջնությունները:

Նախագահը ծանոթացավ մրցաշարի ընթացքին հետաքրքրվեց առանձին պարտիաներով:

Լ.Տեր-Պետրոսյանը ՀՀ շախմատի ֆեդերացիայի նախագահ, ՖԻԴԵ-ի փոխնախագահ Վանիկ Զաքարյանի, ՀՇՖ-ի գլխավոր քարտուղար Գագիկ Հովհաննիսյանի հետ զրուցեց մեր շախմատիստուհիների ելույթների, նաեւ օրերս «Երեւան-Դինամո» շախմատի ակումբի թիմի Եվրոպայի չեմպիոնների գավաթի երեւանյան փնջային մրցաշարում հաղթանակ տանելու եւ հաջորդ մրցափուլ դուրս գալու, հայկական շախմատի հեռանկարների եւ այլ հարցերի մասին:

ՀՀ նախագահին ուղեկցում էին ֆաղաքաղաքացի Վանո Սիրադեղյանը, ՀՀ ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարար Սերժ Սարգսյանը, մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար Արմեն Ամբարյանը:

Վարչապետը, քաղաքապետը եւ նախարարը ծանոթացան առաջնության ընթացքին

ԵՐԵՎԱՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Արդեն ինն օր է, ինչ Երեւանում շարունակվում է շախմատի մինչեւ 16 եւ 18 տարեկան տղաների եւ աղջիկների աշխարհի առաջնությունը:

Առաջնության ընթացքին ծանոթանալու նպատակով, ինչպես Արմենպրեսին տեղեկացրին Երեւանի քաղաքապետարանի լրատվական բաժնից, սեպտեմբերի 30-ին ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանը, քաղաքապետ Վանո Սիրադեղյանը եւ մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արմեն Ամբարյանն այցելեցին «Մոսկվա» կինոթատրոն, որտեղ պայքար է գնում աշխարհի 65 երկրների շախմատիստների եւ շախմատիստուհիների միջեւ: Սրանք հաջողություն մաղթեցին պատանի շախմատիստներին:

Վարչապետի այցը մեկ անգամ եւս հաստատեց, որ շախմատը Հայաստանում շարունակում է մնալ ուշադրության կենտրոնում եւ ապագայում կունենա իր հաստատուն տեղը:

Երեւանյան միջազգայինում

Մայրաքաղաքի «Երեքունի» հյուրանոցի թանգարանի սրահում անցկացվող շախմատի միջազգային մրցաշարում երեք տուր է խաղացվել: Երեք միավորով միանձնյա առաջատարը միջազգային գրոսմայստեր Վալենտին Արբակովն է: Մոսկվացուց ընդամենը կես միավորով են ետ մնում ութ շախմատիստներ, որոնց թվում են մեր հանրապետության ներկայացուցիչներ Լեոնիկ Մանուկյանը, Մհեր Հովհաննիսյանը, Ատոմ Նադանյանը: Երեւանցի գրոսմայստեր Էլինա Դանիելյանի արդյունքն է 2 միավոր, իսկ հանրապետության չեմպիոնուհի Գոհար Հլղաթյանը ունի 1 միավոր:

Առաջին նստաշրջանը

ԵՐԵՎԱՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հոկտեմբերի 1-ին, ժամը 12-ին «Արմենիա-1» հյուրանոցի ճեպազրույցների դահլիճում, իր աշխատանքները կսկսի Համահայկական խաղերի միջազգային կոմիտեի առաջին նստաշրջանը: Կոմիտեն ստեղծվել էր այս տարվա ապրիլին Երեւանում կայացած աշխարհի հայկական սպորտային կազմակերպությունների միջազգային համաժողովի ժամանակ: Եռօրյա նստաշրջանի աշխատանքներին կմասնակցեն կոմիտեի անդամները Երեւանից, Լոս Անջելեսից, Փարիզից, Հոնկոնգից, Բրյուսելից, Բեյրութից, Ստեփանակերտից, Մոնրեալից, Նիկոսիայից, Տորոնտոյից, Մոսկվայից եւ այլ քաղաքներից: Նստաշրջանի օրակարգում՝ 1999 թ. Երեւանում կայանալիք Համահայկական առաջին խաղերի անցկացման հետ կապված խնդիրների քննարկումն է:

ԼՈՒՐԵՐ

Վոլեյբոլ. Աղջիկներն ու պատանիները կվիճարկեն չեմպիոնների կոչումը

Վանաձորում, Սիսիանում եւ Մարտունիում անցկացվեցին 1978-1981 թթ. ծնված պատանիների եւ աղջիկների վոլեյբոլի հանրապետական առաջնության նախնական մրցումներ, որոնցում հաջող հանդես եկած երկուական թիմեր իրավունք էին ստանում հանդես գալու եզրափակիչում: Այդ իրավունքը նվաճեցին պատանիներից՝ Շիրակի, Լոռու, Վայոց ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերի, Երեւան-1-ի, աղջիկներից՝ Շիրակի, Լոռու, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերի, Երեւան-1, Երեւան-2 թիմերը: Նախատեսվում է, որ այս տասներկու կոլեկտիվները հոկտեմբերի կեսերին Երեւանում կվիճարկեն Հայաստանի չեմպիոնների կոչումները:

17 տեսախցիկ՝ յուրաքանչյուր խաղին

Ֆուտբոլի աշխարհի 1998 թ. առաջնության հեռարձակման արտոնություն ստացած «Տելեվիզիոն ռադիո սերվիս-98» (TVRS-98) ընկերությունը հայտարարել է, որ առաջնության 64 մրցախաղերից յուրաքանչյուրը հեռարձակվելու է 17 հեռուստախցիկների միջոցով եւ թվային հեռուստատեսության նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ: Գերդանդաղեցված դրվագները, խոշոր պլանները, լայնանկյուն ու տարանկյուն պատկերները եւ ամփոփիչ տեսարանները մարզասերներին հնարավորություն կտան մանրամասն եւ հանգիստ դիտելու մրցախաղերի բոլոր կարեւոր պահերը:

Պ. Բ.

ՈՒԵՖԱ-ն ուզում է սահմանափակել հովանավորների թիվը եւ ճշտել դաշտի չափերը

Ֆուտբոլիստների մարզաշապիկների վրա նշվող հովանավոր ֆիրմաների անունները երբեմն այնքան շատ են լինում, որ խանգարում են տեսնել շապիկի գույնը եւ համարը: Պատահական չէ, որ ՈՒԵՖԱ-ի վերջին նստաշրջանում դրա նախագահ Լենարտ Յոհանսոնը ցանկություն է հայտնել, որ 1998-1999 թթ. մրցաշրջանում հովանավորների թիվը սահմանափակվի, հնարավորություն տալով «դեռեւս տեսնել մարզաշապիկների գույնը»:

Միաժամանակ ՈՒԵՖԱ-ի մարզադաշտերի հանձնաժողովը հայտարարել է, որ հնարավորության սահմաններում հանվեն մարզադաշտերի ցանցաճաղերը: Պահանջվում է նաեւ, որ նոր կառուցվող կամ վերակառուցվող խաղադաշտերի չափերը մեկընդմիշտ սահմանվեն 105X68 մետր:

Բացի դրանից, ՈՒԵՖԱ-ն զբաղվում է մարդասիրական գործունեությամբ: Մասնավորապես, Կարմիր խաչի հետ մեկտեղ նա օգնելու է այս ամռանը սաստիկ հեղեղումներից տուժած Լեհաստանի, Չեխիայի եւ Գերմանիայի բնակչությանը:

Պ. Բ.

Նեղալցի ֆուտբոլիստը՝ ընդհատակյա բանվոր Ճապոնիայում

Նեղալի ֆուտբոլի հավաքականի անդամ Ջիվան Լաման խաղադաշտում վերջին անգամ երեւացել է 1994 թ. Հիրոսիմայում անցկացված 12-րդ Ասիական խաղերի ժամանակ: Այդ տարվա հոկտեմբերի 9-ին օմանցիներից Նեղալի թիմի կրած պարտությունից հետո Լաման երեք այլ թիմակիցների հետ հեռացավ խաղադաշտից, առանց հանդերձարան մտնելու: Հետագայում պարզվեց, որ նա ընդհատակյա, այսինքն անօրինական աշխատանք է գտել Ճապոնիայում, նախ գործարանում, ապա պահեստամասերի մի արհեստանոցում: «Էկիպ» թերթի տվյալների համաձայն, Լաման վաստակել է ամսական մոտ 1700 դոլար, որի մեծ մասն ուղարկել է Նեղալ՝ իր հարազատներին: Մասնավորապես, այդ փողերով է վճարվել նրա կրտսեր եղբոր համալսարանական ուսումը:

Այս տարվա ամռանը Լաման որոշեց նոր աշխատանք գտնել Տոկիոյի մերձակայքում: Ասկյան կայարանից մեկում փաստաթղթերի ստուգման ժամանակ ոստիկանները պարզեցին, որ նա անձնագիր չունի: Լամային արտաքսեցին Ճապոնիայից:

Լամայի ուղին բռնած ասիացի նախկին մարզիկների թիվը բավական մեծ է: Մասնավորապես, Հարավարեւելյան Ասիայի երկրների բազմաթիվ մարզիկների համար Ճապոնիան իսկական էլդորադո է: Քանի որ ֆինանսական պատճառներով միջազգային մրցումները հաճախ անցկացվում են Ճապոնիայում, ասիացի մարզիկներից ոմանք օգտվում են առիթից եւ ընդհատակյա աշխատանք փնտրում այդ երկրում: Միայն Հիրոսիմայի 12-րդ Ասիական խաղերի ժամանակ «անհետ կորավ» 15 մարզիկ:

Պ. Բ.

Տասնչորս տարի անց

1983 թվականի հոկտեմբերի 4-ին ցամաքի վրա արագության զարմանահրաշ ռեկորդ սահմանվեց: Ռիչարդ Նոուբլը ԱՄՆ-ի Նեւադա նահանգի Բլեք Ռոք անապատում ավտոմեքենայով զարգացրեց 1019,44 կմ/ժամ արագություն: Անցած տասնչորս տարիների ընթացքում բարձրագույն նվաճումը գերազանցելու բազմաթիվ փորձեր եղան, սակայն անօգուտ:

Անցած շաբաթվա ընթացքում վերսկսվեցին գրոհները ռեկորդի վրա: Տուրբինային շարժիչով մեքենայի վարորդը Մեծ Բրիտանիայի ռազմաօդային ուժերի կործանիչ օդաչու էնդի Գրինն էր, իսկ ծրագրի նախաձեռնողն ու կազմակերպիչը ինքը Նոուբլը: Հենց նույն Բլեք Ռոք անապատում փորձերից մեկի ժամանակ Գրինը իր Trust SSC-ով 1150,619 կմ/ժամ արագություն զարգացրեց, սակայն խախտվեցին կանոնները. արգելակի դեր կատարող պարաշյուտային համակարգի խափանման պատճառով մեքենան ավելորդ տարածություն անցավ, եւ արդյունքը չեղյալ համարվեց: Բայց Նոուբլը եւ Գրինը չհանգստացան: Երկու օր անց նրանք նոր փորձ ձեռնարկեցին, որը հաջողությամբ ավարտվեց: Հրաշք մեքենան զարգացրեց 1142 կմ/ժամ արագություն, որն էլ աշխարհի նոր ռեկորդ է:

Ֆլորիան Ռուսոն «Փլեյբոյի» հոկտեմբերյան համարում

Հեծանվահրապարակային մրցումների գծով աշխարհի չեմպիոն Ֆլորիան Ռուսոն արժանացել է ամերիկյան հանրահայտ «Փլեյբոյ» հանդեսի ուշադրությանը, որի հոկտեմբերյան համարում տպագրվում են երկար հարցազրույց Ռուսոյի հետ, ինչպես նաեւ այդ գեղեցիկ երիտասարդի բազմաթիվ լուսանկարներ: Ի տարբերություն շատ ուրիշների, Ֆլորիանը չի լուսանկարվել մերկ վիճակում կամ ցուցադրական կեցվածքներով: Նա նկարահանվել է հաղթական հագուստով, իր գրերի, համակարգչի եւ նույնիսկ արդուկի հետ: Վերջինս Ռուսոյի կենցաղի անբաժանելի մասնիկն է, հանգի ինքն է արդուկում իր վերնաշապիկները:

«ԷԿՈ»

ԱԶԳ

Օրվա հետքով

ՄՈՍԿՎԱ

Ռուսաստանի Պետական դուման դառնում է նոր Սմոլնի

Բորիս Ելցինը սպառնում է գրել խորհրդարանը

Չախ-կոմունիստական ուժերի վերահսկողության տակ գտնվող Ռուսաստանի Պետական դումայի եւ գործադիր իշխանության նախագահի ու կառավարության հակադրությունը ոչ մեկի համար գաղտնիք չէ: Սակայն սեպտեմբերի 29-ի երեկոյան հայտնի դարձավ, որ դայլարը հասել է ճգնաժամային վիճակի: Այդ երեկո ՕՐՏ հեռուստաընկերության «Ժամանակ» ծրագրով ռուսաստանցիներին դիմեց բառացիորեն ափերից դուրս եկած, կաղաղությունից կարմրատակած նախագահ Բորիս Ելցինը, երկրին տեղյակ դահելով, որ «ժողովրդի ընտրյալները» մերժել են ընդունել նույն այդ ժողովրդի սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված 15 փաստաթղթերի մի փաթեթ: Ելցինը հիշեցրեց Դումային նաեւ այլ մեղքեր, հատկապես այն, որ Դուման հրաժարվում է ընդունել օրենք հողի ազատ առուվաճառքի մասին եւ չի ցանկանում, որպեսզի հողը «վերջապես տվի գյուղացուն»: «Ի՞նչ դեմ է անի այս դայմաններում նախագահն ըստ սահմանադրության, հարցնում էր Ելցինը հեռուստաէկրանից, քող այդ մասին Դումայում լավ մտածեն»:

Սա, անշուշտ, Դուման ցրելու ակնհայտ սպառնալիք էր: Որքանո՞վ է իրական այդ սպառնալիքը:

Բավական եվ հարցը միայն այն չէ, որ գործադիր իշխանությունը չի կարողանում խորհրդարանով «անցկացնել» վերոհիշյալ կարեւոր որոշումները: Ի վերջո, Դուման դրա ոանար իր նպատակներն ունի եւ շատ միամիտ կլիներ ենթադրել, թե դատգամավորները դարզապես «ժողովրդի լավը չեն ուզում»: Այստեղ այլ բան կա: Դուման, զուտ քաղաքական նկատառումներով, մոռանալով իր օրինաստեղծ աշխատանքի գերակայությունը, ներքաշվում է շատ մեծ մի արկածախնդրության մեջ փորձելով դառնալ քաղաքական ռեժիմը փոխելու եւ նախագահին տապալելու նոր հեղափոխական ճանապարհ, յուրահատուկ Սմոլնի, որի շուրջ արդեն հավաքվում են ամեն կարգի դժգոհներ: Կոմունիստները, ագրարայիններն ու «ժողովրդաիշխանություն» բլոկի ներկայացուցիչներն իրենց այս դայքարում վերջերս գորեղ աջակից են գտել ի դեմս տիրահռչակ գեներալ Լեւ Ռոխլինի: Վերջինս, իբրեւ կառավարության «Մեր տունը Ռուսաստանն է» շարժման անդամ, երկու տարի առաջ խորհրդարանական խմբակցությունների միջեւ ձեռք բերված «ջենտլմենական համաձայնությամբ» դարձել է դաշտանության դումայական կոմիտեի նախագահ: Սակայն արդեն բավական ժամանակ է, ինչ նա սկսել է իր «ինքնուրույն խաղը» բանակին աջակցելու անվան տակ ձեւավորելով հականախագահական ու հակակառավարական շարժում: Դրա համար Ռոխլինին վռնդել են «Մեր տունը Ռուսաստանն է» խմբակցությունից: Եվ այժմ նա բացեիբաց հայտարարում է, թե իր նդատակը ներկա նախագահին ատարեգից հեռացնելն է եւ «հակաժողովրդական ռեժիմը տապալելը»: Ընդսմին, գեներալը գտնում է, թե այդ նդատակին հասնելու համար ընդունելի են բոլոր միջոցները, այդ թվում նաեւ բանակին անհնազանդության կամ զինված ապստամբության մղելը: Հասկանալի է, որ «Մեր տունը Ռուսաստանն է» խմբակցությունն իր այս «փախստականին» չի կարող հանդուրժել դաշտանության կոմիտեի նախագահի դաշտոնում: Ահա եւ սեպտեմբերի 26-ին խմբակցությունը, ի դեմս իր ղեկավար Ալեքսանդր Շոխինի, Դումայում հարց է բարձրացրել Ռոխլինին մեկ ուրիշով փոխարինելու մասին, որովհետեւ նույն այդ «ջենտլմենական համաձայնությամբ» տվյալ դաշտոնը դատկանում է «Մեր տունը Ռուսաստանն է» խմբակցությանը:

Քվեարկության ժամանակ, սեղմելով նաեւ բացակա ընկերների կոճակները, կոմունիստները, ագրարայիններն ու «Ժողովրդաիշխանության» ներկայացուցիչները իրենց հովանավորության տակ առան Ռոխլինին եւ վերջինիս դաշտոնը դաշտանվեց: Բայց դրանով խախտվեց վերոհիշյալ համաձայնությունը, ինչը ուղիղ գծով տանում է դեպի քաոս Դումայի ներքին կյանքում: Այդ հասկացել էր նույնիսկ կոմունիստ, Դումայի նախագահ Գենադի Սելեզնյովը, որը, հակառակ իր կուսակցության, «կողմ» էր քվեարկել խորհրդարան գեներալին դաշտանության կոմիտեի դաշտոնից ազատելու առաջարկությանը: Նույն կերդ էին վարվել նաեւ անկանխատեսելի Վլադիմիր Ժիրինովսկին եւ իր լիբերալ դեմոկրատները՝ ամբողջ կազմով, ինչդես նաեւ «Յաբլոկոն»: Սակայն դա, ավաղ, բավարար չէր:

Այսդիսով, կողմերի առճակատումը հասել է վերջնասահմանին եւ սդառնում է կազմալուծել Դումայի աշխատանքը: Իսկ սա շատ ավելի կարեւոր է, քան Ելցինի հիշատակած օրինագծերի մերժումը: Ուստի նախագահին իսկադես այլ բան չի մնում, բացի հեղափոխական նոր խմորումների մրջնաբույնի վերածված այս նոր Սմոլնին գրելը: Ով հետեւել է Ելցինի քաղաքական կենսագրությանը, այս հարցում դատրանքներ չդեսք է ունենա: Այն մարդը, որը չվախենալով ամբողջ աշխարհի աչքի առաջ տանկային թնդանոթներով գնդակոծել նախկին Գերագույն խորհուրդը, երբ դրա սահմանադրական իրավունքը չուներ, այժմ, թիկունքին սահմանադրություն ունենալով չի վարանի վերջին հարվածը հասցնել: Իմ տպավորությամբ, Ելցինն առայժմ խորհելու մի կարճ ժամանակ է բողել Պետական դումային, որդեսզի նա ուշքի գա եւ խելքը գլուխը հավաքի:

ՌԱՖԻԿ ՏՈՎՍԱՆԵԼԻԱՆ

Վիեննայի դիվանագետները մինչեւ դեկտեմբեր առաջընթաց են ակնկալում

Սկիզբը էջ 1

Այստեղ դեսք է ասել, որ հանգրվանային լուծման այս տարբերակի մասին վերջերս ակնարկություններ եղել են միջազգային մամուլում, ուրեմն անցած ուրբաթ իր մամուլի ասուլիսում նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը մանրամասներ չհայտնեց, բայց հանգրվանային լուծման մասին նրա կատարած ակնարկները ընդհանուր բովանդակությամբ համընկնում են «Ազատության» թղթակցի տված տեղեկություններին:

Ռոնալդ Էգլյաթոնը սակայն չի հայտնում, թե որ կողմն է դժգոհ հանգրվանային լուծման այս տարբերակից, բայց դժվար չէ դա կռահել: Վերջերս Հայաստանի արտգործնախարարության խոսնակը «Ազատություն» ռադիոկայանին հայտնեց, որ Սինսկի խմբի համանախագահների առաջարկների շուրջ Հայաստանն ունի լուրջ վերադահումներ:

Ավելին, մի ամերիկացի դիվանագետ Ռոնալդ Էգլյաթոնին հայտնել է, որ Ադրբեջանը շատ ավելի դրական նորեն է արձագանքել միջազգային բանագնացների առաջարկներին: Այդ դիվանագետը, մեկնաբանելով Բաքվի նման կեցվածքը, ասել է, որ սա բնական է, քանի որ տարածքների վերադարձը ավելի շատ նդատավոր է Ադրբեջանի համար:

Խոսելով բանակցային գործընթացում վերջին մի քանի ամիսներին ծագած դժվարությունների մասին, ամերիկացի դիվանագետը նաեւ հայտնել է, որ Լիսաբոնի գագաթաժողովից բխած հայտարարությունը շատ բան էր տալիս Ադրբեջանին եւ գրեթե ոչինչ Հայաստանին: Այդ իսկ դատճառով անհրաժեշտ է, որ ժամանակ անցնի Լիսաբոնից, որդեսզի հնարավոր լինի մերժել 50 դետությունների համաձայնությամբ հրադարակված փաստաթուղթը եւ շարժվել դեպի հարցի կարգավորման նոր առաջարկներ:

Իսկ ի՞նչ են ասել Վիեննայի դիվանագետները նոր ծրագրի շուրջ համաձայնություն ձեռք բերելու ժամկետների մասին: Ռոնալդ Էգլյաթոնը հայտնում է, որ դիվանագետները հույս ունեն որոշակի արդյունքներ տեսնել մինչեւ դեկտեմբեր, երբ Կոդենհագենում կկայանա ԵՍԿ-ի արտգործնախարարների հանդիդումը:

Վերջում ավելացնենք, որ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի անդամներից մեկը Ինտերֆաքս գործակալությանը հայտնել է, թե Հայաստանի վերջերս կատարած հայտարարությունները հույս են ներշնչում, որ հնարավոր է որոշակի առաջխաղացում տեսնել մինչեւ այս տարվա ավարտը: Ակնարկելով Լեւոն Տեր-Պետրոսյանի մամուլի ասուլիսը, նա ասել է, թե սա վկայում է, որ փոփոխություն է տեղի ունեցել Երեւանի դիրքորոշման մեջ, թեեւ դա կարող է դարզապես տակտիկական խաղ լինել հայերի կողմից, մանավանդ եթե հաշվի առնվի այն հանգամանքը, որ անցնող երկու ամիսների ընթացքում Հայաստանի դիրքորոշումը ամբողջովին ոչ կառուցողական է եղել: Ասվել, Հայաստանի կողմից Սինսկի համանախագահների նոր առաջարկների ընդունումը կարող է մերժել Ղարաբաղը, եւ արդա Հայաստանը ծրագրի ընդունման կամ մերժման դատասխանատվությունը թողնի Ղարաբաղի վրա: Հայկական կողմը այսդիսի խաղեր արել է անցյալում, ասել է ադրբեջանցի դաշտոնյան:

«Արամ Խաչատրյան»
համերգասրահ
շաբաթ, հոկտեմբերի 4-ին, ժամը 11-ին
Հայաստանի ֆիլհարմոնիկ
նվագախումբը եւ երգչախումբը
հրավիրում են
հոգեւոր երաժշտության ժամի
նվիրված կինոռեժիսոր



ՖՐՈՒՆԶԵ ԴՈՎԼԱԹՅԱՆԻ
հիշատակին
Ծրագրում՝ Մոցարտ՝ «Ռեքվիեմ»
Դիրիժոր՝ Լորիս Ճգնավորյան
Մուտքն ազատ է

Դիզայնի հեղափոխություն է սդասվում Երեւանում

ԵՐԵՎԱՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՍԱՆ ՏԱՊԱՆ: Երեւանի քաղաքաշինարանը նախատեսում է մայրաքաղաքում տեղադրել սոցիալական նշանակության բոլոր օբյեկտների խանութների, դեղատների, վարսավիրանոցների եւ այլնի մոտ «արագ կողմնորոշման խորհրդանշաններ»: Դրանից բացի, բազմաթիվ օբյեկտների տերերի առաջարկվել է ամբողջությամբ փոխել ցուցանակները՝ դրանց գեղարվեստական ձեւավորման չափազանց ցածր մակարդակի դատճառով:

Այդ առումով հոկտեմբերի 1-ից տեղի կունենա հայ նկարիչների յուրօրինակ ցուցահանդես-մրցույթ, ուր կներկայացվեն «արագ կողմնորոշման խորհրդանշաններ», ինչդես նաեւ ցուցանակների նախագծեր եւ քաղաքի փողոցներում առավել անճաշակ կատարված ցուցանակների լուսանկարներ: Մրցույթի ժյուրիի նախագահը լինելու է Երեւանի քաղաքաշինարանի վարչության նախագահ Վանո Սիրադեղյանը: Քաղաքաշինարանի «Դիզայն» դետական ձեռնարկության տնօրեն Արմեն Գեւորգյանը նշեց, որ աշխատանքների գնահատման հարցում քաղաքաշինարանը կարող է դիմել գեղարվեստական խորհրդի օգնությանը, որի կազմում կընդգրկվեն հայ հայտնի նկարիչներ, դիզայներներ եւ ճարտարապետներ: Լավագույն գործերի հեղինակներին կենտրոնի մրցանակներ:

Հայտարարվել է նաեւ լավագույն առանձնատան, թերթի կրդակների եւ առեւտրի ու սդասարկման այլ օբյեկտների նախագծերի մրցույթ: Մրցույթի արդյունքները կամփոփվեն դեկտեմբերի 20-ին:

«ԲՐԱԲԻՈՆ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ
ԿԱՏԱՐՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ
1. Լայն դրոֆիլի ֆլորիստ-դիզայներների
2. Մայրաքաղաքի բարձրակարգ սդասարկման տարբեր սրահների կառավարիչ-ադմինիստրատորների կուրսերում:
Կարող են դիմել միջնակարգ եւ բարձրագույն կրթությամբ աղջիկներ եւ տղաներ:
Ընդունելությունը կատարվում է հարցազրույցով՝ հաշվի առնելով դիմորդի ընդհանուր զարգացածությունը:
Ադմինիստրատորների կուրսերում բարձրագույն կրթությունն ու բարեեսությունը դարտադիր են:
Նոամսյա ուսման ընթացքում ուսանողները կծանոթանան ծաղկարվեստի ուղղություններին, արհեստական եւ բնական ծաղիկներից փնջեր, կոմդոզիցիաներ, զանբյուղներ դատրաստելու գաղտնիքներին, ինչդես նաեւ ինտերիերների եւ էքստերիերների ձեւավորման, գեղարվեստական փաթեթավորման արվեստին:
Լավագույն շրջանավարտները կատանվվեն բարձրավճար աշխատանքով:
Հասցեն՝ Արովյան 11, հեռ. 56-14-38
Փաստաթղթերը ընդունվում են մինչեւ հոկտեմբերի 5-ը

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՆ ՀՐԱՎԻՐՎՈՒՄ
խարտուղարուհի հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուների լավ իմացությամբ:
Հասցեն՝ Խորենացի 25
Հեռ. 52-04-40

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Կիսնամեայ երեխա 10 ամսականից բարձր տարիքի
Հեռ. 24-88-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
մեկ սենյականոց բնակարան (ընտիր կահավորված) Նորքի I զանգվածում, հեռ. 63-03-47

ԳՆՈՒՄ ԵՄ
3 սենյականոց բնակարան Կոմիտասի սկզբնամասում:
Հեռ. 26-13-31, 58-18-41

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ – Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների մասին (առաջարկ, դահանջարկ) հեռախոսով: 589167, 581351

«Դարբերական» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արամբրանաց 2. Դրանցման թիվ 65. Դասդ 69149. Դատվեր 674. Տդաքանակը 3000. Ստորագրված է տդագրության՝ 30.09.1997. Գինը 100 դրամ